

2013

# Մ Ի Ո Ն

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԿԱՆԻ ՀԱՅ ՊԱՏՐԱՐԹՅՈՒՆՆԵՐ



ՆՈՐ ՀՐԶԱՆ

Ը. ՏԱՐԻ 1934



ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԿԱՆ





## Կ Ո Ն Դ Ա Կ Հ Ա Յ Ր Ա Պ Ե Տ Ա Կ Ա Ն

ԽՈՐԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍՍՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ, ԾԱՅ-ՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏ-ԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ

Առաջնորդաց մերոց եւ Հոգեւոր պաշտօնէից, Կեդրոնական եւ գաւառական վարչութեանց եւ ամենայն հաւատացելոց ի վիճակս Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ, որք յերոպա, յԱմերիկա, յԵգիպտոս, ի Պարսկաստան, յԻրաք, եւ այլուր շնորհիւ, սէր եւ խաղաղութիւն Տեառն եւ ողջոյն Հայրապետական եւ օրհնութիւն ի Լուսաւորչաւէն Տանաւէս Ս. Էջմիածնի, ամէն:

Եհաս մեզ լուր բօրաբեր եղբական մահուան Տ. Ղեւոնդ Արքեպիսկոպոսի Դուրեան ի Նիւ-Եօրք, Առաջնորդի արեւելեան թեմին Միացեալ Նահանգաց Հիւսիսային Ամերիկայի, որ ի ցունց եհան զհոգիս Մեր եւ զսիրտ, համակելով ի վիճս եւ ի ցաւ խորին:

Անագան հասեալ Մեզ մանրամասնութիւնք դժպիսի եղեռնագործութեանդ, որ ելից զազգ մեր համայն վշտ, արատաւորելով զկրօնն մեր քրիստոնէական եւ զհաւատ յաչս ամենայն աշխարհի, յապաղեցան եւ բանք Մեր կսկծանաց հայրական սրտի եւ դատապարտութեան դիպաց, որք զամօք միայն եւ զնախասինս բերեն անուան ժողովրդեան:

Ողբամք զմահ Տ. Ղեւոնդ Արքեպիսկոպոսի, սիրեցեալ որդւոյ Մերոյ եւ զանփոխարինելի կորուստ այնպիսի անձին, որ կարէր սակաւին կեալ զամս երկարս յօգուտ հասարակաց գործի եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ Մերոյ սրբոյ. որ ընթանար ըստ ցուցման եւ հրահանգաց Մերոց. ջան ի գործ եղեալ հեռի պահել զԵկեղեցի մեր եւ զհաստատութիւնս նորա ի կուսակցական պայքարաց, ուղղելով եւ զաչս հաւատացելոց ի հեռասանէ առ հոգեւոր մայրս մեր Ս. Էջմիածին, առ հայրենի երկիր մեր եւ բնիկ ժողովուրդ նորա:

Ամենայն փորձ մարդասպանութեան ինքնին արժանի է դատապարտութեան, զի Տէր կենաց եւ մահու Աստուած է միայն, բայց գեր ի վերոյ է քան զստորական ոմիր եւ սրբապղծութիւն մեծագոյն՝ բարձրացուցանել զձեռն ի վերայ բարձրաստիճան հոգեւոր պաշտօնէին Եկեղեցւոյ ի Տան Տեառն, որ պարտէր մնանել երկիւղածութեամբ միայն եւ բարեպաշտական զգացմամբ:

Բայց առաւել դատապարտելի է ոմիրդ, որ կատարեցաւ ի վերայ բարձրաստիճան պաշտօնէին Եկեղեցւոյ, որ ըստ բարոյական պարտուցն եւ հայրական սիրոյն, զոր ունէր Նա առ հօտն իւր, եւ ըստ հրահանգաց Մերոց առաջնորդէր ի շաւիղ խոհեմութեան եւ ազգաւոր գործունէութեան, ջանալով հեռի պահել ի մոլորութեանց եւ յազգաւլմաս գործոց: Նզովք հասարակաց



համարեմք զայդպիսի ոնիր անուր, զոր ոչ տեսանեմք յընթացս դարաւոր պատմութեանց ի մեզ եւ յօտար ազգս:

Յանդրանիկ կոնդակի Մերում ցուցանելով զհամապարհ ազգօգոս գործունէութեան՝ ըստ մտաց քրիստոնէական կրօնի եւ եկեղեցւոյ մերոյ, ուղղեալ էաք առ ամենայն Առաջնորդս, առ դասս Եպիսկոպոսաց եւ վարդապետաց, համայն հաւատացեալոց Հայաստանեայց եկեղեցւոյ եւ բանս զայսոսիկ, — «Զգուշացուցանեմք մանաւանդ զԱռաջնորդս արտասահմանեան քեմօրէից հեռի կալ եւ պանել զհաւատացեալ Չեր ժողովուրդ ի կուսակցական պայքարաց եւ յանախորժութեանց, հայելով միայն ի բարոյական եւ ի կրօնական շինութիւն հօտիդ: Հայրենի երկիրս եւ համայն ազգ ի սփիւռս կարօտին խաղաղութեան առ ի բուժել զընկալեալ վէրս իւրեանց, ուսի եւ պարտիք գուն գործել վտարել ի միջոյ հաւատացեալոց զամենայն ինչ, որ հակառակ կայ խաղաղութեան եւ մի բողոք զքեանական արարս ընդդէմ մայր Հայրենեաց մերոց՝ Խորհրդային Հայաստանի եւ Կառավարութեան նորին»: (Անդրանիկ կոնդակ 1 Յունիս 1933 թ.):

Արդ Տ. Ղեւոնդ Արքեպիսկոպոսն ընթանալով զհետ Հայրապետական յորդորանաց, որպէս հարագտս որդի Ս. Աթոռոյս, կատարելով զպատուէրս Մեր յօգոս եկեղեցւոյ եւ սիրեցեալ ժողովրդեանս, յօգոս հայրենեաց, զԽորհրդային Հայաստանէ ասեմ, որ վերսին կոչի ի կեանս, եղեւ տարապարս զոն ի կատարման ազգանուէր պարտականութեանց՝ ի ձեռն մղորեալ եղեւնագործաց:

Այսու Հայրապետական կոնդակա Մերով, յայտնելով զխորին մեր վիտես եւ զցաւ վասն տարապարս եղբերական մահուան որդւոյ Մերոյ սիրելւոյ՝ Տ. Ղեւոնդ Արքեպիսկոպոսի, դատապարտեմք զոնագործս եւ զոնիրն, որպէս զհետեւանս մոլար մատնութեանց եւ յորդորեմք զամենեսին որպէս հայր հասարակաց, զգաստանալ, բողոք զանօգոս վէնս եւ զերկապառակութիւնս, հեռի մնալ մանաւանդ յանգուսպ գործողութեանց, որք վնասաբերք են եւ անվայել անուան բարեկիրք ազգի ու ժողովրդեան, ոչ ի շահ բնիկ հայրենեաց Խորհրդային Հայաստանի եւ Կառավարութեան՝ հասեալ Մեզ ի բաժին, որպէս զիրական եւ զբանկագին ժառանգութիւն, խաղաղ պահպանութիւն որոյ խարխիս յուսոյ եւ արմատ կենդանութեան է ըստ իմաստուն ասացուածոյ, քէ — Ծառն արմատով է ծառ եւ տունն հիմամբ —:

Յորդորեմք հայրաբար զամենայն հաւատացեալս, զմտաւորականս եւ զգործիչս յասպարիզի ազգային եւ եկեղեցական Հաստատութեանց՝ մղել զպայքար եռանդուն յանուն խաղաղութեան, խզելով զարմատ ազգակործան երկպառակութեան եւ համակելով զսիրտ համայն զաւակաց Մերոց ի սէր դարաւոր եւ Ս. եկեղեցւոյս եւ Ս. Էջմիածնի, հայրենեաց մերոց Խորհրդային Հայաստանի՝ առ որս ուղղել ցանկամք զաչս հաւատացեալ զաւակաց Մերոց, որպէս առ կեդրոնս հոգեւոր եւ ազգային յառաջդիմութեան:

Յաւելումք եւ զՀայրապետական սաստ, եւ զգուշացուցանեմք զայնպիսիս յեկեղեցականաց, մանաւանդ յարեւելեան քեմին Միացեալ Նահանգաց, որք փոխանակ քաղաքի սիրոյ եւ գործակիցք Առաջնորդին լինելոյ ըստ կոչմանն՝ մասնակից եղեն պայքարաց ընդդէմ նորա՝ առաւել եւս խորացուցանելով զայն ի վնաս ազգի եւ եկեղեցւոյ:



Եւ Մեք վեցապիւն արտիւ աղօթեմք առ Բարձրեալն, զի զնոցի հանգուցելոյն ի լոյս երեսաց խոցոց ընկալցի եւ զնոցի իմաստութեան եւ զգաստութեան նեղցէ ի վերայ ժողովրդեան Մերոյ, ամէն:

Ի 16ն Մարտի 1934 ամի

Ըստ Տումարիս ՌՅԶԳ

Ի Հայրապետութեան Մերում յԲ. ամի  
յԱրարեալեան Մայր Արոտ Ս. Էջմիածնի

Ի Վաղարշապատ

թ. 20

(Իսկականին վրայ ստորագրուած է.)

ԽՈՐԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍՄԵՆՍՅՆ ՀԱՅՈՑ

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՏԱՌԱՊԱՆՔԻՆ ՓԱՍՏԸ

Ամենէն կարևորն ու համոզիչն է ան, տառապանքին փաստը, թէ՛ ինքզինքին և թէ՛ ուրիշներուն համար: Իր սիրած և իր կեանքին իբր կանոն որդեգրած սկզբունքին կամ իտէալին անկեղծօրէն փարիլ կարենալու համար՝ մարդ պէտք է մտադիւր կրած ըլլայ անոր հարկադրած տառապանքը. և ուրիշները՝ հաստատուելու համար անոր վերաբերմամբ իրենց զգացած կամ իրենց թելադրուած համարումին մէջ, պէտք է վստահօրէն զիտնան թէ զաղափարական դործիչը արդարև ո՞րչափ տառապած է իր վարդապետած և իրականացնել առաջադրած տեսութիւններու համար:

Հաւատքի մարտիրոսներուն, հայրենիքի նահատակներուն, բարոյականի ախոյեաններուն, զիտութեան նուիրուածներուն մեծութիւնը ասոր մէջ է իրապէս: Առաջիններուն արիւնը և երկրորդներուն մահու շափ տքնութիւններն եղած են իրենց արժանիքին վկայութիւնը. առանց ասոր՝ շատ բան պիտի պակսէր իրենց բուն արժանաւորութենէն, ու մարդկութիւնը պիտի չկրնար լիովին ըմբռնել թէ ի՞նչ հոգիներ ապրած են զանոնք ներկայացնող անուններուն ներքև:

Զաւակը երախտազգած սիրով կը պահէ իր սրտին մէջ յիշատակը իր ծնողաց ա՛յն արարքներուն մանաւանդ, որոնց մէջ վշտմբեր դրուադներու պատկերը կայ. աշակերտը սրտանց կը կապուի իր ուսուցիչին՝ ստէպ ո՛չ այնքան թերևս անոր հմտութեան խորութենէն հմայուած, որքան իր պարտականութեան մասին անոր ունեցած անձնուէր եռանդէն. զինուորը արեան ճամբուն մէջ կը հետևի իր սպային և բանակը՝ զօրապետին, երբ վստահ են անոնց հոգւոյն վրայ մանաւանդ քան ճարտարութեան, ու ժողովուրդը հանրային մարդուն մէջ խօսքի և զրչի առաւելութիւններէն աւելի՝ կեանքի և զործերու ապացոյցն է որ կը փնտռէ իրաւամբ:

«Պիտի հաւատամ՝ մինչև որ չտեսնեմ ու չջօշափեմ իր խոցերուն նշանները», կ'ըսէր Թովմաս իր ընկերներուն, երբ անոնք իրեն կը խօսէին յարուցեալ փրկիչին մէկ երևումին մասին՝ որուն ներկայ չէր եղած ինքը: Եւ երբ այդ շինիչ շնորհը չզլացուեցաւ իրեն, ու անիկա կրցաւ անձամբ հաստատել



Յիսուսի ձեռքերուն, ոտքերուն և կողին սալները. «Տէր իմ և Աստուած իմ» հառաչանքը դուրս թաւ իր կուրծքէն: Անոր վէրքերը միայն կրցան դայն ճանչցնել իրեն. տառապանքին փաստը միայն կրցաւ ամրապնդել երկուանքի վարանումներէն տարուած աշակերտին համոզումն ու հաւատքը՝ իր վարդապետին տիրական հոգւոյն ու աստուածային էութեանը մասին:

«Ի՞նչ են ապացոյցներդ». ճակատամարտի մը վախճանին՝ երբ սպայ մը համարձակեր էր կոտրած սիրտին վիշտը ներկայացնելու Նարդէոնի, որ անդէտ թողուած ըլլալով անոր գործած քաջագործութիւններուն՝ վարձատրուելիքներու ցանկին մէջ չէր գրած իր անունը, երբ այս հարցումն ըրեր էր աշխարհակալը, սպան իր կուրծքը բանալով յանկարծ՝ ցոյց տուեր էր սալները. ու վէրքերը եղեր էին իր ռազմական արժանիքին:

Տառապանքի փաստն է արժանիքին ամենէն վաւերական ստուգանիշը: Ու իրեն՝ գործիչին համար ալ չկայ կազդուրող մխիթարութեան աւելի քաղցր զգացում մը, ինքնագոհութեան և ինքնաբուխ խրախոյսի ներքին և աւելի մաքուր բերում մը՝ քան սուրբ նպատակի մը համար սիրով և քաջութեամբ ու զիտակցութեամբ մանաւանդ կրուած վիշտերու յուշը. որչա՞փ սրտառուչ է Միւսէի այս անմահ տողը.

«Միակ բարիս անանցական՝ արցունքն է այն զոր քափեցի»:

Գաղտնիք չէ երբեք թէ ամենէն հզօր եւ գլեցագնական գործիչներուն, ամէն մարզի մէջ իրական և հանրական արժանիք ներկայացնող անձերուն հոգւոյն մէջ խորք մը կայ մէկ կողմէ արտմութեան՝ որ ծնունդն է աշխարհն ու անոր օրէնքները կազմող տաժանելի պայմաններուն զգացումն, ու միւս կողմէ քաջութեան՝ որ արդիւնքն է արտաքին անոպայ իրականութեան դէմ ներքնապէս կազմուած զօրեղ ոյժի մը զօտակցութեանը: Արդ, այդ երկու հոգեկան վիճակներուն՝ արտմութեան և քաջութեան ներդաշնակուած համաձուլումն է նկարագրի այն բարձր լրջութիւնը, որ տառապանքի դպրոցին մէջ զարգացած մեծ հոգիներուն ամենէն բնորոշ գիծն է:

Ասոր համար է որ իրաւամբ ըսուած է թէ «վիշտը գերազոյն ուսուցիչն է». գերազոյն՝ որովհետեւ ան ստուգիւ կը սովորեցնէ մեզի՝ լուրջ ըլլալ, չտարուիլ պատւանքներէ, չբռնուիլ չոր դատումներու ցանցին մէջ, թոյլ չտալ որ իրաւունքին զգացումը մոռցնէ պարտականութեան մտածումը, զիտնալ չշփոթել բանականութեան և սրտին պահանջները, և կարենալ այնպէս հաւասարակշռել խորհուրդին և զգացումներու նժարները՝ որ մարդ շուարումի չմատնէ իր ճակատագրին ուղղութիւնը:

Հարցուցէ՛ք փորձառութեան. ո՞րն է նախընտրելի՝ իբրեւ զօրութիւն նկարագրի. վայելքէ վայելք թռչկոտող սի՞րտը, թէ վիշտի սալին վրայ ամէն օր կռանուող կամբը. պատասխանը ամէն ոք պիտի լսէ իր խղճին մէջ նոյն իսկ:

Վիշտը տոկուն, փորձառու, խելամուտ, հզօր և ազնիւ կ'ընէ հոգին. առածի մը չափ ամուր է այս մտածութիւնը: Ու ասիկա ճիշտ է ոչ միայն անհատներուն՝ այլ նաեւ ժողովուրդներուն, հաւաքականութիւններուն համար: Ինչպէս նոյն օրէնքն է որ կը վարէ խոտի նուրբ ծղօտի մը և հաստաբետ ծառի մը գործարանաւորութիւնը, միեւնոյն սկզբունքներով է որ կը բացատրուին յաճախ թէ՛ անհատին և թէ՛ ազգի մը բարոյականն ու նկարագիրը:

Մտաւորապէս զգաստ և բարոյապէս զօրեղ կը լինին, այսինքն լուրջ նկարագիր կ'ունենան այն ժողովուրդները, որոնք շատ տառապած են արդարու-



թեան, բարիին եւ ճշմարտութեան համար: Ազգերու ոյժն ու մեծութիւնը, որոնք կը յայտնուին ոմանց պետական կազմին, այլոց ընկերային կեանքին եւ յաճախ նաեւ անոնց կրօնական դրութեան և իրենց հաւաքական միութիւնը արտայայտող ուրիշ երևոյթներու մէջ, արդիւնքն է ընդհանրապէս իրենց հաւաքական բարբին ու հոգւոյն լրջութեան, որ իր կարգին՝ կը ստացուի տաժանելի և երկարատև փորձառութիւններու գնով:

Ամէն ժողովուրդ, իր գոյութեան ամբողջ ընթացքին կամ անոր որ եւ է ճակատագրական մէկ շրջանին, աւելի կամ նուազ չափով կրնայ զգացած ըլլալ այս պատմական ու նոյն ատեն հոգեբանական ճշմարտութիւնը: Բայց թոյլ կու տանք մեզի ըսելու թէ ոչ մէկ ազգ զգացած չէ զայն թերեւս այնպէս ու այն չափով՝ ինչպէս ու ինչ չափով պիտի կարենայինք զգացած ըլլալ մենք:

Առաջին այն պահէն ի վեր՝ ուր ազգային գիտակցութիւնը փոխանակեց մեր մէջ տոհմային կամ ցեղական զգացումը, այսինքն Փրիստոնէութեան լոյսին դառնալէս ի վեր, վիշտը զարկաւ միշտ մեր կեանքին. չանցաւ մեր գլխուն վրայէն դար մը, ուր, մէկ կամ երեքմի աւելի անգամներ, քաղաքական փոթորիկներ հիմնովին սարսէին մեր գոյութիւնը, թէ՛ իրրեւ ազգային դրութիւն և թէ՛ իրրեւ աշխարհադրական կազմ. բայց ամէն անգամուն ալ վէրքը, ուշ կամ կանուխ, սպիացաւ վերջապէս. աղէտքը չկրցաւ բոլորովին ջլատել մեր մէջ հաւաքական միութեան ոյժը. փորձանքները փորձառութեան դարձնողներ եղան մեզի համար, ու, ընաշխարհիկ թէ տարաշխարհիկ հորիզոններու զիրկը, կրցանք միշտ վերստին ժողովել մեր ինքնութիւնը. վասնզի վիշտը կրցաւ միշտ աւելի լուրջ ընել զմեզ, ու մեր տառապանքի փաստածրարին մէջ, որ մեր պատմութիւնը եղաւ, թէ՛ մենք և թէ՛ ուրիշները կրցանք կարգաւ ապրելու իրաւունքէն չզրկուած ժողովուրդի մը արժանիքը:

Բայց այդպէս եղաւ արդարեւ միշտ, այսինքն վիշտը չկրցաւ երբեք քանդել զմեզ ազգովին, ու տառապանքն ընդհակառակն համբերութեան, քաջութեան ու ստէպ նաեւ իմաստութեան սքանչելիքներ կատարել տուաւ մեզի մեր վրայ խուժող արհաւիրքներուն դէմ, որովհետեւ միխթարութեան, սիրոյ և յոյսի կենդանի զօրութիւններ շինած էր մեր մէջ տիեզերական հրաշագործ ոյժը՝ կրօնական հաւատքը, ազբիւրը բոլոր այն առաքինութիւններուն՝ որոնցմով միայն կարելի է ստեղծել և վերականգնել ազգերուն կեանքն ու բարոյականը: Եկեղեցին, հոգեւոր այն ամբողջը, որուն պաշտպանութեան տակ ազգը կրցաւ զրեթէ միշտ ծառանալ իր բարոյական գոյութեան սպառնացող վտանգներուն դէմ, այդ տեսակէտով կրցաւ կատարել միշտ իր փրկարար առաքելութիւնը, որովհետեւ հասարակաց զգացումին, ամէնուն խղճմտանքին վկայութեամբ՝ իր դերն էր այդ. ու ամէնքը, ընկերային և մտաւորական դիրքի տէր անձինք, որոնք պաշտօն կամ յաւակնութիւն ունէին որ եւ է չափով կամ կերպով առաջնորդելու ազգին, համախոհ էին միշտ իրարու՝ այդ տեսակէտին շուրջը: Այո՛, վասնզի տառապանքին փաստը խօսուն զօրութիւն մըն էր ամէնուն համար. ու այդ փաստը եկեղեցին էր ինքնին:

Հիմակ որ մեծ և բարի ոյժերու այդ իրական աղբիւրը, կրօնքի զգացումն ու ազգային եկեղեցւոյ դադափարը, սղտորելու եւ անոր պատմական դերը ուրանալու ջանքեր կը դաւադրուին դէս ու դէն, կը տեսնուի՝ արդեօք ամպը՝ որ հետզհետէ կը կուտակուի ահա հորիզոնին ոչ շատ հեռաւոր մէկ զծին վրայ...



## ԿՐՕՆԱԿԱՆ

### ՅԻՍՈՒՍԻ ԳՈՐԾԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Բ. յօդ.— Առաջին օրջան. Փիլիպպեան Կեսարիոյ մէջ կատարուած սկզբնաւորութիւնք

Հոս կը սկսի գալիլիական երկար զործունէութիւնը, զոր այնքան եռանդով կը նկարագրեն համատեսականները: Ինչպէս երբեմն՝ աստուածապետական ուստանին մէջ, Տէրը հոն իր սկընաւորութիւնը կը կատարէ այնպիսի կերպով մը՝ որ իրեն պատեհութիւն կուտայ ճանշնալու ժողովուրդին մտայնութիւնը: Այս է արժէքը Նազարէթի մէջ կատարած իր առաջին քարոզութեան, որուն յիշատակը պահած է Ղուկաս, իրրեւ լաւ պատմիչ մը, և որուն մէջ Յիսուս, խորհրդաւոր կերպով, առանց աղմուկի, մարգարէական խօսքի մը կիրարկութեամբը իր անձին համար, իր քաղաքակիցներուն կը ներկայանայ իրրեւ Մեսիա (Ղուկ. Գ. 16-19, 21): Բայց աւանին մարդիկը, որոնք չէին մոռցած ատաղձագործին որդին, զարմանքով ու քիչ ետքը զայրոյթով կը պատասխանեն, երբ Փրկիչը զանոնք կը բաղդատէ Եղիայի ժամանակի խաբայեացիներուն հետ և կը յանդիմանէ զանոնք իրենց անհաւատութեան համար (հ. 22, 24-30): Այն ատենէն Քրիստոս կը թողու Նազարէթը, իր առաքելական աշխատութեանց կեդրոնը փոխադրելու համար Կափառնաու, Գալիլիոյ ամենէն բազմամբոյս շրջաններէն մէկին մէջ (Ղուկ. Գ. 31, Մտթ. Գ. 13):

Շատ ուղղուած՝ այն փորձառութենէն զոր կրած էր հոս ալ, ինչպէս Հրէաստանի մէջ, ետ կ'երթայ, ու այս անտաշ և երկրաքարչ ժողովուրդը իր ետեւէն բերելու համար, ժամանակ մը Յովհաննէս Մկրտչի տեսակէտին համաձայնելով, անոր քարոզութեան գաղափարը և կերպը կ'օրդկերէ. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից» (Մտթ. Գ. 17, հմտ. Գ. 2, Մրկ. Ա. 4): Սակայն, այդ ատեն ալ, Յիսուս իր միտքէն չի հեռացներ բնաւ իր գործին և մարգարէին գործին տարբերութիւնը, իր ուսուցումին հետ միաժամանակ

կատարելով հրաշքներ, իր մեսիական արժանիքը ցուցնող այս գործերը, որոնք համը բայց աղղու կոչ մըն էին խաբայելի հաւատքին ուղղուած: Շտաթ օր մը մասնաւորապէս, կատարեց շարք մը բժշկութիւններ, որոնց տպաւորութիւնը կը թուի խորունկ եղած ըլլալ (Ղուկ. Գ. 31-44). Մրկ. Ա. 21-39. Մտթ. Ը. 14-17) ուստի իր համբաւը կը տարածուէր երկրին մինչև հեռունները (Ղուկ. Գ. 42-44. Մտթ. Ա. 39):

Բայց իր աշխատութեան դաշտը որքան լայննար, այնքան աւելի անհրաժեշտ կը դառնար որ Յիսուս իր սկզբունքներուն նուիրեալ աշխատակիցներ գտնէր իրեն: Կանխաւ արգէն, Հրէաստանի մէջ ճանչցած էր հինգ կամ վեց երիտասարդ Գալիլիացիներ, որոնք իր ճամբորդութեանց միջոցին ժամանակ մը ընկերացեր էին իրեն, թէև համատեսականներու պատմութենէն այնպէս կը հետեի որ Փրկիչին երկրորդ անգամ Գալիլիա դարձած ատենը (Յովհ. Գ. 43 եւ հետ., Մտթ. Գ. 12 եւ հետ.), Անդրէաս, Սիմոն, Յովհաննէս եւ միւսները թողած էին զինքը և իրենց նախկին զբաղումներուն դարձած: Յիսուսի հետեւէն առաջ, անոնք աշակերտները եղած էին Յովհաննէս Մկրտչի, առանց ատոր համար վերջնապէս հրաժարած ըլլալու իրենց արհեստներէն և ընտանիքներէն: Բարեպաշտ խաբայեացիներ, մարգարէին քարոզութենէն խանդավառուած, ուրախութեամբ ողջունէր էին Մեսիան. բայց կը մտածէին անշուշտ նորէն դառնալ իրենց սովորական կեանքի աշխատանքներուն, իրենց հաւատքէն առանց բամբուելու: Իսկ Տէրը ոչ մէկ կերպով չէր ընդդիմացած ատոր: Պէտք էր զգուշանալ զահալէժ արարքներէ, զորս անխորհրդած եռանդ մը կրնար ծնիլ. այս տեսակէտով, որոշ ժամանակ մը աշխարհէն հեռու մնալը օգտակար միայն կրնար ըլլալ այս նորագարծներուն համար, որոնք, այդ կերպով, ամփոփուելու և իրենց անձին տէր դառնալու առիթ մը պիտի ունենային: Եւ սակայն, երբ Տէրը այդ պատրաստութիւնը ալ կատարուած կը տեսնէ, իր մօտ կը կանչէ զանոնք, իրրեւ աշակերտ իրեն հետ կապելու համար զանոնք, այդ երիտասարդները՝ որոնց ուղղամտութիւնն ու լուրջ յատկութիւնները գնահատեր էր արգէն:



Այս տեսարանը համատեսականները ինչ ինչ տարբերութիւններով կը ներկայացընեն: Երբորդ աւետարանին է կարծես որ ամենէն աւելի պատշաճ կերպով կը ներկայորդէ զայն. անոր աւելցուցած մանրամասնութիւններն ալ, նոյնպէս, ամենէն աւելի սրտազրաւ են: Այս պատմութեամբն երուն հասարակաց կէտն է սա խօսքը. «Եկա՛յք զինի իմ, ես արարից զձեզ որսորդս մարդկան»: Այդպիսի հրաման մը, ա՛յնքան յատկանշական, ա՛յնքան ճշգրիտ, ոչ միայն կը մատնէ իր ծագումը, այլ նաեւ կ'ենթադրէ պարագաներ, որոնց մեղի կուտայ բանալին, և որոնք աւետարանական պատմութեան թեզանը կը կազմեն: Սա խօսքը՝ «Արարից զձեզ որսորդս մարդկան», կը ցուցնէ այս Գալիլիացի գործաւորներուն ուղղուած կոչին վերջնական նկարագիրը: Իրենց հին արհեստին տեղ պիտի անցնի նոր աշխատանք մը, որ սակայն անհունապէս աւելի ծանր է ու նաեւ աւելի դժուարին. քանի որ անոնք պիտի մաքառին մարդկային սրտի սաստկութեանց և նենգութեանց դէմ. իրօք ալ, անոնք այդ վայրկեանէն կը թուին լքած ըլլալ ձկնորսութեան գործը: Մինչեւ որ Յիսուսի մահը առժամաբար նորէն անոր դարձուց զիրենք (Յովհ. ԻԱ.):

Չորս աշակերտներն են. Անդրէաս, Սիմոն, Յակոբոս և Յովհաննէս, որոնք վճռապէս յարած են Տէրօջը: Հինգերորդի մը՝ Դեիի (որ է նոյն ինքն Մատթէոս) կոչումը համատեսականներն ալ կը պատմեն: Գալով միւս եօթնին, որոնք յետոյ պիտի ամբողջացնեն առաքելական խումբը, անշատ կը մնայ թէ ի՞նչպիսի պարագաներու մէջ անոնք հնազանդութիւն յայտնեցին Փրկչին: Դիտենք միայն թէ շատ անգամներ Յիսուս հրաւէր ուղղեց լաւ տրամադրութիւն ցուցնող իր ունկնդիրներուն՝ հետեւելու իրեն (Մտթ. Ը. 21, 22. Ղուկ. Թ. 57-62. Մտթ. ԺԹ. 21), և թէ իր ամբողջ գործունէութեանը միջոցին անիկա միշտ շրջապատուեցաւ հետեւողներէ, (Ղուկ. Ժ. 1), որոնցմէ շատերն ևս, ստոյգ է թէ, լքեցին զինքը ասպարէզը վերջանալէ առաջ (Յովհ. Զ. 66):

Հասկնալի է թէ Գալիլիացի մարգարէին այս գործունէութիւնը զրգուց իր հակառակորդները: Հրէաստանէն զայն վը-

տարող կուսակցութեան պատուիրակները եկան լրտեսել զայն մինչև հրեւսի գաւառին մէջ (Ղուկ. Ե. 17), իր քայլերուն կառչելով իր անունը աղարտելու համար (Ղուկ. Ե. 21, 30): Իրր թէ շարաթը պղծած ամբաստանելով զայն, փոքրիկները, յուսահատած, համաձայնեցան նոյն խակ հերովդիանոսներուն հետ, զայն սպանելու համար (Մրկ. Գ. 6. Ղուկ. Զ. 11). Յիսուս, ինքն ալ, այս յարաճուն թշնամութեան կը պատասխանէ՝ իր աշակերտներուն խումբը կազմակերպելով: Կը ստեղծէ իր սպայաւորայրը, ըստ Աստուծոյ խրայելի պետերը, զորս այնուհետեւ ապստամբ Հրէութեան դէմ պիտի հանէ: Ուրիշ բաւերով, զինքը շրջապատողներուն յարածուփ զանգուածէն անիկա ընտրեց տաններկուքը՝ զորս առաջնալի կարգին բարձրացուց. յետոյ, անոնց ներկայութեանը, եւ կարծես ցոյց տալու համար հին աստուածապետութեան տեղ նոր մը դրուած ըլլալը, բազմութեան առջև կ'արտասանէ Լերան քարոյը, զոր շատ իրաւամբ կոչած են Երկնային Թաւառութեան հրովարտակը:

Այս երկու դէպքերը, այսինքն երկոտասանին ընտրութիւնը և Տիրօջը ծրագիր ճառը, անձուկ յարաբերութեան մը մէջ են Ղուկասու պատմութեան հետ, ուր անոնք ունին այնպիսի տեղ մը՝ որ բոլորովին ի նպաստ է այս աւետարանին պատմական ճշդութեանը: Յետոյ կուգան շարք մը հրաշքներ, որոնց թիւին և կարգին մասին միշտ համաձայն չեն համատեսականները. ու կարելի է որոշել նաեւ թէ երեքէն որո՞ւն պէտք պիտի ըլլայ նախապատուութիւն տալ: Յամենայն դէպս, զօրութեան այս գործերը լսելէն վերջ է որ Յովհ. Մկրտիչ իր աշակերտներէն երկուքը Փրկչին կը զրկէ հարցում մը ներկայացնելու համար անոր (Ղուկ. Է. 18-23, Մտթ. ԺԱ. 2-6): Դպրաներն ու փարիսեցիներն ալ, նոյնպէս, կը սաստկացնեն իրենց բռնութիւնները, ու մէկէ աւելի անգամներ կ'ամբաստանեն զՅիսուս թէ դեւերու իշխանին միջոցաւ է որ կը հանէ դեւերը (Մտթ. Թ. 34, Ժ. 25, ԺԲ. 24), թունալից խօսք՝ որ իրենց վրայ կը քաշէ սուրբ Հոգիին դէմ հայհոյանքի, այսինքն միակ աններկի մեղքին շանթահարիչ պաասխանը (Մտթ. ԺԲ. 31-32, Մրկ. Գ. 28-29):



Յարաճուն այս հակամարտութեան մէջ ինչ կ'ըլլան ամբողջին տրամադրութիւնները: Բազմութիւնները ըստ երեւոյթին համակիր են Փրկչին, զոր անդադար կը շրջապատեն բժշկութեան ցանկացող հիւանդներու և այդ հրաշքներու տեսքէն գիւթուած մարդոց հոծ խումբեր (Ղուկ. Դ. 42, Ե. 15, Զ. 17-19, Է. 1, Ը. 4): Յիսուս, սակայն, վստահ չէր այս ամբողջ ժողովուրդին յարումին վրայ. վասնզի գիտէր թէ այդ խանդավառութիւնը, որ թիւրիմացութիւններէ և աղիտութիւնէ կ'առնուր իր սնունդը, իր մէջ կը ծածկէր յանցապարտ անհոգութեան, երկրաւոր փառասիրութեան և անհաւատութեան ներքին վիճակներ: Ասոր համար է որ այս վայրկեանէն անիկա կը սկսի առականորով խօսիլ, որպէսզի կարենայ զտում մը ընել իր բազմաթիւ աշակերտներուն մէջէն (Մտթ. ԺԳ. 10-17, Մրկ. Դ. 10-12, Ղուկ. Ը. 10): Բայց այս զգուշութիւնները չեն կրնար առաջքը առնուլ ժողովուրդին խանդավառութեան մշտական աճումին, մինչև որ կը հասնի հացերու բազմացման հրաշքը, որ կը ճշտէ տաղնապին աստիճանը: Գալիլիոյ առաքելութեան ամենէն ներոյժ գործունէութեան մէջ ենք հոս: Զորս ամիսներու ժամանակամիջոց մը կ'անոց այս աշխատութիւնը ընդհատուած է արագ ճամբորդութեամբ մը միայն ղէպի չրէպտան, Պուրիմի տօնը կատարելու համար հոն, մարտ ամսուան մէջ (Յովհ. Ե.):

Կը հարցուի թէ ինչու Յիսուս այդքան քիչ կարեւորութիւն ունեցող տօնի մը համար երուսաղէմ ելաւ: Թերեւս, գիտնալով չրէից և տնոնց պետերուն չարաստութիւնը իր մասին (Յովհ. Բ. 18-25, Դ. 1-3), կ'ուզէր ինքն իսկ ստուգել միտքերու վիճակը՝ վերաբերմամբ յառաջիկայ Զատիկի տօնին: Եւ սակայն հրաշք մը զոր Աստուած իր ճամբուն վրայ կը զնէ և զոր ինքը ստիպուած կը զգայ ինքզինքը կատարելու, կը պայթեցնէ իր թշնամիներուն չատոնց զսպուած կատաղութիւնը (Յովհ. Ե. 1-18). հայհոյութեան, չարաթիւրբանաբարութեան ամբաստանութիւններ կ'ընեն իր մասին. իր կեանքին դէմ ոճրագործութեան անգամ խօսքեր կը լսուին (հ. 16, 18): Այս անգամ Սինիգրիոնը մահուան պատիժ չ'արտասանեւ անոր դէմ.

աւելի հոգը, Ղազարու յարութենէն վերջ է որ պիտի ընէ անիկա այդ բանը: Հեղինակը չ'ըսեր նոյն իսկ որ իրական միջոցներու դիմած՝ զոր օրինակ Փրկիչը քարկոծել սկսած ըլլան: Ամբողջ ըստածն այն է թէ Հրեաները «խնդրէին սպանանել զՅիսուս». այսինքն թէ կը վիճարանէին, կը դաւադրէին, անոր անձէն ինքզինքնին ազատելու լաւագոյն միջոցը գտնել կ'աշխատէին, առանց սակայն տակաւին անոր վրայ ձեռք երկնցնել կարենալու:

Ինչ վերապահում ալ որ սակայն զնել ուղուի, կոխը պէտք եղած կերպով յայտարարուած է: Այդպիսի անստանդարտ մը հոգը, Յիսուս ա'լ պիտի չ'կարենար խորհիլ երուսաղէմ մնալ Զատիկի տօնին համար. ուստի կը դառնայ Գալիլիա, ուր Յովհաննու Աւետարանը համատեսականներուն կը տանի զմեզ հացերու բազմացման հրաշքովը: Անիմաստօրէն չէ որ չորս Աւետարանները կը համաձայնին աւանդելու համար այս իրողութիւնը, որ Տիրոջ Գալիլիոյ մէջ ունեցած գործունէութեան բարձրագոյն կէտն է: Ամբողջ, խանդավառուած՝ ի տես այս հրաշալի եղելութեան, կ'ուզէ յափշտակել և թաղաւոր ընել զՅիսուս (Յովհ. Զ. 15). բայց անիկա կը հանգարտեցնէ այս վատաւոքող ոգևորութիւնը, իր վարդապետութեան խորհրդաւոր խորութիւնները պարզելով Հրեաներուն: Այդ ատենէն կը պատռի քօղը: Քրիստոս ի լոյս հանած է «սակաւաթիւ ընտրեալները» չեղող բազմութեան մարմնաւոր մտածումները: Բոլոր այս կարծեցեալ աշակերտները, զիմակաղուրկ եղած և վհատած, մի առ մի կը հեռանան. վարդապետին չուրջը ամայութիւն յառաջ կուգայ (Զ. 60, 66): Յիսուս ատոր համար չի հրաժարի իր առաքելական գործունէութենէն. միայն ալ կը զգուշանայ Գալիլիոյ բազմաբնակ կեդրոններէն. ու կը հանդերձօնին երկու հեռաւոր ճամբորդութիւններ՝ ղէպի Տիրոսի և Սիդոնի երկիրը, և ղէպի հիւսիս արեւմուտք՝ Փիլիպպեան Կեսարիոյ շրջանին մէջ, որոնց յիշատակը սղահած են միայն Մատթէոս ԺԴ. 22, ԺԸ. 12, և Մարկոս Զ. 45, Ը. 26: Ըստ երեւոյթին ոչինչ չէ փոխուած Փրկչին գործութեան մէջ. կը շարունակէ վիճիլ փարիսեցիներուն դէմ, հրաշքներ գործել, հիւանդներ բժշկել,



ինչպէս անցեալին մէջ. իրականութեան մէջ, սակայն, վարէջքի շարժումն է որ սկսած է: Յովհաննէս միակ զիծի մը մէջ կը խտացնէ ներքին պատմութիւնը, այդ ժամանակամիջոցին տիրական նօթը, որուն արտաքին քանի մը իրողութիւնները միայն կը պատմեն երկու առաջին համատեսականները: Ամբոխէն լքուած տեսնելով ինքզինքը, Յիսուս կ'ուզէ որոշ վիճակի մը առաջնորդել տասներկուքը, կամ աւելի՛ կ'ուզէ ճշտու գիտնալ թէ անոնք ինչ գաղափար կազմած են իր անձին մասին: Ատկէց է հարցումը՝ զոր անոնց կ'ընէ Փիլիպպեան կեսօրիոյ մէջ, և որուն Պետրոս կը պատասխանէ ծանօթ յիշատակելի յայտարարութեամբ (Մտթ. ԺԶ. 13-20. Մրկ. Ը. 27, 30. Ղուկ. Թ. 18-21):

Այս տեսարանին տարողութիւնը, ստոյգ է թէ, կը թուի յոյժ վտանգուած ըլլալ յովհաննէսեան պատմութեան ինչ ինչ հատուածներով, որոնք կարծես կը հաստատեն թէ, սկիզբէն, աշակերտները անվարան կը հիանան իրենց վարդապետին մեծ սիրայութեան վրայ (Յովհ. Ա. 42, 46, 50): Բայց այդ գրուածքին առաքելական ծագումին հակասող քննադատութիւնը պիտի չկարենար օգտագործել այդ հատուածները՝ ուռնաց բռնադրօսելու անոնց իմաստը: Աւետարանական պատմութեան վարկպարազի ընթերցողն իսկ պիտի կարենար երևակայել թէ հաւատքի այդ առաջին պայթումէն ետքը ա'լ կատարելիք յառաջդիմութիւն չունեցան. մինչդեռ, իրականութեան մէջ, նոր բացուած այդ ասպարէզին մէջ, ամէն բան նոր պիտի ձևօք բերուէր, Անդրէասի և Փիլիպպոսի յայտարարութիւնները (հ. 42, 46) արձագանգ կրնան եղած ըլլալ այն խօսքերուն՝ որոնց Յովհաննէսի մօտ ըսուելը լսած էին. գալով Նաթանայէի ողագակին, (հ. 50) արտայայտութիւնն է անիկա խանդի յանկարծական խոյանքի մը զոր պատճառած էր Փրկչին հրաշալի գիտելութեան գիւտը:

Այդ ժամէն, սակայն, Յիսուսի նոր հետեւողներուն համար կը սկսէր ցաւազին հրահանգութիւն մը: Այդ երկտասարդ Գալիլիացիները, ինչպէս Հրեաներն ընդհանրապէս, յայտնի է թէ տակաւին Մեսիային և իր զործին մասին յոյժ անճիշտ գաղափար մը միայն ունէին: Անոնք ա-

մէն բանէ առաջ աշխարհիկ մեծութեան երազներ է որ կը փայփայէին, և, հակառակ իրենց տրամադրութիւններուն լրջութեանը, այնքա՛ն է այս երկրաւոր խեղճութիւն կախարդանքը, որ անոնք իրենց վարդապետին զործունէութեան վերջին պահուն ալ տակաւին չէին կրցած բոլորովին թօթափել անոր ազդեցութիւնը (Ղուկ. ԺԹ. 11. Մտթ. Ի. 21. Գործք Ա. 6): Երեւակայեցէք ուրեմն այն փորձութիւնները, զորս պարտաւորուեցան անոնք կրել մինչ զարմացկոտ նայուածքով կը հետեւէին Փրկչին զործունէութեանը, որ ամէն օր անգթօրէն ի դերեւ կը հանէր անոնց արտաքին եւ մակերեսային գաղափարները: Առաջին հանդիպումէն յայտարարած իրենց հաւատքը ամուր պահելու համար՝ պէտք կար ներոյժ հրաժարումի աշխատանքի մը: Անոնք կրնային միշտ իրենք իրենց խնդիր ընել թէ այդ Յիսուսը, որուն հաւատացած էին, արժանի՞ էր Մեսիա անունին. թէ իրենք հրաշալի պատրանքի մը խաղալիկները չէին արդեօք: Յովհաննէս Մկրտիչ, իր բովանդակ դիւցազնութեամբը, սխալեցաւ այդ մասին. բանտին մենութեանը մէջ, Գրիստոսի մասին իր վստահութիւնը կարծես սարսեցու խախտու չէնքի մը պէս (Մտթ. ԺԱ. 31). տասներկուքին սէրն ալ կրնար մթազնիլ այդ ահաւոր փորձութեանց ընթացքին: Ատկէց է Պետրոսի դաւանութեան վերին աստիճանի ծանրակշիռ հանգամանքը, և խնդալից զեղումը՝ որով Տէրը կ'ընդունի հաւատքի այդ արարքը: Յիսուս գիտէ հիմակ որ եթէ ուրիշները կը լքեն զինքը, ինք կրնայ սակայն վստահիլ գոնէ իր մտերիմներուն վրայ. բան մը՝ որուն այնքան սուրբ անհամբերութեամբ կը սպասէր Փրկիչը, և որ, մինչև այդ օրը, ամենազեղեցիկ պտուղն էր իր առաքելութեան:

Բայց ի՞նչ յարաբերութեան մէջ պէտք է դնել այս իրողութիւնը այն իրողութեան հետ, զոր այս առթիւ կը պատմէ չորրորդ Աւետարանը (Զ. 67-70): Հոս ալ, ինչպէս Փիլիպպեան կեսօրիոյ մէջ, Պետրոս է որ խօսք կ'առնու, ու երկու պարագտներուն մէջ ալ կը յայտարարէ իր վարդապետին մեծ սիրայութիւնը, վստահի եթէ յովհաննէսեան հատուածին ձեւ քիչ մը տարբեր է կարծես, բայց խորքը բոլորովին նոյն է:



Այսուհանդերձ կարելի է նոյնացնել երկու խօսակցութիւնները. երկու վաւերագրութեան հարեանցի բաղտատութիւն մը պիտի երևան բերէ անոնց տարբերութիւնը: Փիլիպպեան կեսարիոյ մէջ կը հարցնէ իր աշակերտներուն թէ ժողովուրդին մէջ ի՞նչ կը խօսուի իր մասին. Յովհաննու աւետարանին համեմատ, կը հարցնէ անոնց թէ միւսներուն պէս իրենք ալ արդեօք երթալ կ'ուզեն: Փիլիպպեան կեսարիոյ մէջ, Տէրը իրեններուն հաւատքին կը պատասխանէ գոհաբանական զգացումներով. յովհաննէսեան պատմութեան զժամ տեսարանին մէջ, Բրիստոս տխուր ակնարկ մը կը նետէ անհաւատարիմ աշակերտին վրայ, որ օր մը զինքը պիտի մատնէ:

Դանի որ պէտք է երկու իրողութեաները շփոթել իրարու հետ, համատեսականներուն պատմածն է որ թուականի առաջնութիւն ունի. Փրկչին զուարթ զարմանքը անհասկնալի պիտի մնար, եթէ Փիլիպպեան կեսարիոյ դառնութիւնը յառաջագոյն վկայութեան մը կրկնումը միայն եղած ըլլար: Միայն թէ, այս վայրկեանէն, Յիսուսի առաքելութեան մասին համարումը օրէ օր կը սկսի տկարանալ ժողովուրդին սրտին մէջ: Բիշ մը աւելի ուշ է ուրեմն որ, տեսնելով այս ցաւալի լքումը, Բրիստոս նորէն կը հարցնէ առաքեալներուն, որուն վրայ Պետրոս աւելի շեշտուած կերպով կը կրկնէ իր առաջին յայտարարութեան պարունակութիւնը: Աշակերտներուն հոգին լեցուած էր. այդ յիշատակելի օրերուն բոլոր խօսակցութիւնները անշուշտ կը դառնային այն նիւթին շուրջը որ տրոփել կուտար բոլոր սիրտերուն: Բայց եթէ Յիսուս ուրախութիւնը ունի հաստատելու իր մտերիմ շրջանակին հաւատարմութիւնը, միւս կողմէ տխրութեամբ է միայն որ կը հաստատէ թէ տարակոյսին վարակումը թափանցած է իր ընտրեալ ընկերներու շրջանակէն ներս. «Ո՞չ ես զձեզ զերկոսասանոց ընտրեցի, և մին ի ձէնջ սատանայ է» (Ձ. 70): Վերջապէս կատարուած է գտումը. տազնապին ելքը նոյն ատեն վախճանն է Տէրօջը Գալիլիական գործունէութեան յառաջագուական շարժումին:

Ժ. Պ.

## ՍՈՒՐԲ ԳԻՐՔ

Սուրբ Գիրք. այս անունը կ'արթնցնէ յիշատակը ամենէն սուրբ յոյգերուն որոնցմով բարախած ըլլայ երբեք մարդկային սիրտը. անկիա խորհիլ կուտայ բոլոր այն բարձր յոյսերուն վրայ, որոնք երկրաւոր գոյութիւնը վեր կը բարձրացնեն տառապանքի եւ մահուան օրէնքի ենթարկումէն, և կը կապեն զայն իրաց կատարեալ կարգի մը, որ առարկան է մեր լուսագոյն տենչանքներուն: Կարելի է ըսել թէ այս գիրքը բոլոր գիրքերուն մէջ այն է ինչ որ եղած է Մարդուն Որդին մարդոց մէջ: Ահա ա՛յս է որ կ'արտայայտէ Ս. Գիրք անունը (Bible կամ le Livre. բառ մը, որ հաւանաբար յունարէն յոգնակի մըն է — βιβλία — և զոր միջնադարեան լատիներէնը եզակի իգականի մը փոխեց), անշուշտ գիրքերու այս հատքոյթը ներկայացնելու համար իրրեւ գերադանց գիրք մը, ամէն մարդու համար անհրաժեշտ եղած միջոցը՝ իրականացնելու համար իր աստուածային կոչումը:

Տիրապէս խօսելով, Սուրբ Գիրքը միակ գիրք մը է. ամբողջութիւն մըն է անիկա, որ կը բովանդակէ եօթանասուն և չորս զրուումներ, որոնք խմբագրուած են նախաքրիստոսեան տասնեհինգ դարերու և քրիստոնէական թուականի առաջին դարու ընթացքին, եւ, եթէ ներկի է գործածել հոս այս թիւը, յիսունէ աւելի հեղինակներէ, որոնք, բացի Ղուկաս աւետարանիչէն, ամէնքն ալ հրէական ծագում են ունեցած: Քառասունեւեօթը, և որոնք կը կազմեն առաջին հաւաքումը, որ Հին Կտակարան կը կոչուի, գրեթէ ամբողջովին գրուած են երբայրէն լեզուով. քսանեւեօթը, որոնք երկրորդ հաւաքումը՝ Նոր Կտակարանը՝ կը կազմեն, գրուած են յունարէն լեզուով, որ Մեծն Աղեքսանդրի աշխարհակալութենէն ի վեր, կերպով մը տիեզերական լեզու էր դարձած: Այն կապը, որ այս եօթանասուն և չորս զրուումները մէկ ամբողջութեան մէջ կը միացնէ, հասարակաց խորհուրդն է Աստուծոյ Թաղաւորութեան՝ որ օր մը պիտի հաստատուի մարդկութեան ծոցին մէջ:



Աստուած, արդարեւ, գործ մը կը կատարէ մարդոց վերաբերմամբ, դաստիարակութեան եւ փրկութեան գործ մը, որ պէտք է յանդիմանել երկրի վրայ կատարեալ իրականացումին: Բայց այս գործը չի կրնար կատարուիլ առանց մարդուն գործակցութեանը: Ազատ էակներ, մենք պէտք է զիտակցօրէն լծուինք անոր, թէ՛ աշխատելու համար որ անիկա մեր մէջը կատարուի, եւ թէ՛ տարածելու համար զայն մարդկութեան ծոցին մէջ: Այս երկու՝ նըպատակներուն համար ալ, անհրաժեշտ է որ մենք ճանչնանք ու ըմբռնենք այդ աստուածային աշխատանքը, ու Սուրբ Դիւքը այն տեւական միջոցն է որ Աստուած ուզած է ի գործ դնել, մարդոց հայթայթելու համար այդ ծանօթութիւնը: Թող ներուի մեզի քանի մը բառերով ընդլայնել հոս այդ մտածումը:

Աստուած, իր պատկերին համեմատ ստեղծելով մարդը, առաջադրեց գոյութիւն տալ էակի մը, որ կարենայ բարձրանալ մինչեւ իրեն, հաղորդակցիլ իր սուրբ կեանքին եւ ընտելանալ բոլոր էակներուն նկատմամբ ունեցած իր սիրոյ խորհուրդներուն, եւ օր մը բոլորովին իր մէջ ըլլալ: Ուստի, անմիջապէս սկսաւ կատարել անոր մասին դաստիարակչական աշխատանք մը, որուն ամէնէն յատկորոշիչ գործը եղաւ պատուիրանք մը՝ մարդը բարձրացնելու իր ընդածին բնազդներուն գերութեանէն՝ կատարեալ ինքնատիրապետութեան, բարոյական ազատութեան:

Դաստիարակութեան այս գործը կանգ չառաւ բնաւ, երբ, իր անհնազանդութեամբը, մարդս կամաւորապէս խզեց այն կապը որ զինքը կը միացնէր Աստուծոյ հետ, բայց փոխեց իր բնութիւնը: Աստուած, այն ատեն, աշխատելով հանդերձ բարձրացնել մարդը, պարտաւորուեցաւ ըզբողիլ անոր վերականգնումովը: Իր գործը դաստիարակչականէն՝ փրկագործականի, ազատագրականի փոխուեցաւ: Իր գործած սխալին հետեւանքով, մարդը երկու չարիք հրաւիրած էր իր վրայ. աստուածային դատապարտութեան եւ թաքիւրած, եւ իր յօժարութիւններուն գերի դարձած էր: «Ով որ մեղք կը գործէ, գերի կ'ըլլայ մեղքին»։ Ըսաւ Յիսուս: Աստուածային կամքին դէմ հակառակութեան եւ ինքզինքին

առաւելագոյն սիրոյ սկզբունքը երբ անգամ մը մարդկային բնութեան մէջ մտնէ, չի կրնար անպտուղ մնալ հոն: Ուրեմն եթէ մարդուն բարձր կոչումը պէտք էր որ իրականանար տակաւին, անհրաժեշտ էր որ ըլլար ազատագրում մը, ազատագրում՝ որ մէկ կողմէն Աստուծոյ գործն ըլլար, եւ որ սակայն, միւս կողմէ, չկարենար կատարել մարդուն մէջ, առանց անոր հաւանութեան կամ գործակցութեանը: Այսպէս, կը հասկցուի (1<sup>0</sup>) թէ ինչո՞ւ դաստիարակութեան աշխատանքը միւսնոյն ատեն փրկագործական գործ մը եղաւ, եւ (2<sup>0</sup>) թէ ինչո՞ւ համար այդ փրկագործութեան հետ հարկաւոր եղաւ որ համընթացաբար կատարուէր Յայնուրեան գործ մը: Եթէ մարդը, որպէս ազատ էակ, պէտք էր գործօն կերպով աշխատէր իր սեպհական ազատագրումին համար, եւ հետեւաբար ճանչնար Աստուծոյ իրեն նկատմամբ ունեցած ծրագիրը, պէտք էր որ այդ ծրագիրը յայտնուէր իրեն: Ըլլանալով ինք՝ ինքնիրմով՝ պիտի չկրնար ի յայտ բերել զայն, ու անգէտ պիտի մնար նոյն խել այն դիտաւորութեանը՝ զոր ունէր Աստուած իրեն չընդհանրելու ու զինքը փրկելու մասին: Արդ, Յայնութիւնը այն գործն է, որով Աստուած մարդուն ճանչցուցած է անոր նկատմամբ ունեցած իր խորհուրդները:

Կայ նախնական յայնութիւն մը, տիեզերական եւ մնայուն յայտնութիւն մը, զոր Աստուած, սկիզբէն, դրաւ մարդուն սրտին մէջ՝ բնութեան գործերով, զորս մեր առջեւ հաստատեց իրրեւ մշտապէս կենդանի պատկեր մը, որոնց մէջ կրնանք նըկատել եւ ուսումնասիրել իր հիմնալի կատարելութիւնները, եւ մասնաւորաբար իր զօրութիւնը՝ իմաստութիւնը եւ բարութիւնը: Այս տեսարանին հանդէպ, մարդուն բաւական են իր զգայարանները՝ իմացականութիւնը եւ քիչ մը խորհրդածութիւն, ընդնշմարելու համար, այնքան գործող պատճառներու եւ յառաջ եկած արդիւնքներու, այնքան բարեգործ նպատակներու յատկացում աշխարհ միջոցներու մէջէն, այդպիսի տիեզերքի մը առաջին պատճառը՝ այդպիսի գործի մը իմացական եւ բարի հեղինակը: Այս յայտնութեան, սկիզբէն իսկ, լծորդուեցաւ աւելի ներքին եւ աւելի պերճախօս յայտնութիւն մը, առանց



որուն՝ արտաքին յայտնութիւնը դժուարաւ պիտի ըմբռնուէր. ըսել կ'ուզենք այն հանդիսաւոր ձայնը՝ որ մարդկային գիտակցութեան մէջ կը յայտարարէ բարոյական օրէնքը, բարիին ու չարին զանազանութիւնը, առաջինը ընտրելու եւ երկրորդը մերժելու պարտականութիւնը: Այս ձայնը, մեր կամքէն ու մեր հակումներէն անկախաբար, մեզի կը յայտնէ զԱստուած, իրրեւ սուրբ էակը, որ կը պատուիրէ բարին ու կը դատապարտէ չարը, իրրեւ դատաւոր՝ որ կը պատժէ մին ու կը վարձատրէ միւսը, իրրեւ էակ մը՝ որուն աչքէն ոչինչ կը վրիպի: Այն յայտնութիւնը, զոր Աստուած անդադար կուտայ իր ներկայութեան ու իր կամքին մասին՝ բնութեան եւ գիտակցութեան կրկնակ միջոցները, ահա այդ յայտնութիւնն էր զոր Առաքեալը ի նկատի ունէր, երբ կ'ըսէր Փոքր Ասիոյ հեթանոսներուն. «ոչ եթէ զինքն առանց վկայութեան եթող» (Գործք ԺԴ. 17): Հո՞ս է ահա մարդոց մէջ ամէն կրօնական զգացման չուկէտը, յնակէտը որեւէ դաստիարակութեան՝ որով Աստուած կը ջանայ իրեն բարձրացնել զանոնք, աստուածային էակին աւելի կամ նուազ չփոթ գաղափարին սկզբունքը, որ միշտ կազմած է եւ այսօր եւ տակաւին կը կազմէ նոյն իսկ ամենէն անաւագեալ հեթանոսութեան հիմքը:

Բայց այս նախնական յայտնութիւնը, որով Աստուած մարդուն շարունակ կը ցուցնէ իր գոյութիւնը եւ իր բնութեան հիմնական գիծերը, մեզի չի ճանչցներ իր իմաստութեան մեղ նկատմամբ ունեցած ծրագիրները: Բնութեան գեղեցկութիւններով եւ գիտակցութեան սուրբ ձայնով մենք կրնանք նախազգալ Աստուծոյ կատարելութիւնը եւ իր կամքին գերազանցութիւնը: Բայց այս բնական միջոցները պիտի չկրնային մեզի ծանօթացնել այս կամքին բացորոշ զիտումները եւ ոչ ալ անոր տեսութիւնները հանդէպ մեզի: Որպէսզի մարդը ճանչնայ այն վսեմ դիրքը, որո՞ւն կը կանչէ Աստուած զինքը, պէտք է ուրիշ բնութեամբ յայտնութիւն մը, որո՞ւն պէտք է գայ պատրաստել վերեւ մեր նկարագրած առաջին յայտնութեան հաւատարիմ կիրարկութիւնը:

Այս Բարձրագոյն Յայտնութիւնը այն է

որ, ինչպէս կ'ըսէինք, չպիտի կրնար չընկերանալ փրկագործութեան գործին, որուն նպատակն էր կորզել մարդը անաւագումի իր վիճակէն ու վերստին կարող ընել զայն իրագործելու իր սուրբ կոչումը: Եւ որովհետեւ Յիսուս Քրիստոսով կատարուեցաւ այդ վերականգնումը, անո՞ր միջոցաւ՝ այսինքն անոր անձին մէջ է որ մենք ընդունեցինք այդ գործին մեկնութիւնը, կատարեալ յայտնութիւնը: Իր աշակերաններուն ըսաւ Յիսուս. «ոչ եւս կոչեմ զձեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա, այլ զձեզ կոչեցի բարեկամս, զի զամենայն գոր լուսյ ի Հօրէ իմմէ ծանուցի ձեզ» (Յովհ. ԺԷ. 15): Եթէ զեւ պակաս բան մը կայ այս երկնային հաղորդակցութեան մէջ, կը խոստանայ լրբացնել զայն առաքումով ծշմարտութեան Հօգիրն, որ պիտի խօսի առաքեալներուն՝ ինչ որ Հօրմէն լսած է: Եւ հիմակ, այլեւ ճանչնալով Աստուծոյ սիրոյն իր մասին պատրաստած ծրագիրները, մարդը կրնայ ազատօրէն եւ գործօն կերպով մասնակցել այդ ծրագիրներուն իրագործումին՝ իրեն եւ աշխարհի վերաբերմամբ:

Նախնական յայտնութեան ու այս վերջին յայտնութեան միջեւ կը դասուին չարք մը միջնորդական յայտնութիւններ, որոնք, միասին կատարուելով, օժանդակած են դաստիարակական այն աշխատանքին զոր Աստուած չէ գաղտնի բնաւ ընելէ մարդուն անկումէն մինչեւ Յիսուս Քրիստոսի գալուստը: Հոս պիտի չխօսինք աստուածային այն հաղորդակցութիւններուն մասին զորս Ս. Գիրքը կը յիշատակէ եւ որոնք տեղի ունեցած են աւելի առաջ քան անոնք որոնք հիմնած ու պահպանած են Խառնելի գոյութիւնը: Մասնաւորաբար կանգ կ'առնունք այս վերջիններուն առջեւ, որոնք բուն իսկ իւրաքանչեւ Յայտնութիւնը կը կազմեն: Ասիկա եղած է միութեան գիծը նախնական եւ վերջնական յայտնութիւններուն միջեւ: Ասիկա ծառայած է պահպանելու առաջինին առկայ լոյսը եւ պատրաստելու վերջինը, իրրեւ նախածագ արշալոյս արեգական երեւումին. ա՛յս յայտնութիւնն է որ յատկապէս կը շահագործուէ հոս զմեզ, քանի որ այս տեղ մասնաւորապէս պիտի զբաղինք Հին կտակարանով:



Երբ Աստուած հրաւիրեց Արքահամբ մեկնել Միջագետքէն, երթալ բնակելու համար աւելի արեւմտեայ երկիր մը, Քանանը, իր հայրենիքը կապալաշտութեան մէջ ընկղմած էր: Միայն Սուրբ Գիրքը չէ որ կ'ըսէ զայս: Նոր կատարուած զիւտեր, որոնք ի յայտ բերին այդ մարգը ու նոյն իսկ այն քաղաքը ուր նախապէս կը բնակէր Արքահամբ, հայթայթած են անվիճելի ապացոյցները սանձարձակ հեթանոսութեան մը, որ հոն կը թաղաւորէր:

Միաստուածութիւնը, ճշմարիտ Աստուծոյ՝ միակ եւ սուրբ Աստուծոյ հաւատալիքը, մարդկութեան այս նախնական հաւատքը, որուն պահպանումը անհրաժեշտ պայման էր ապագայ փրկագործութեան, յոյժ սակաւաթիւ ներկայացուցիչներ միայն ունէր, թերեւ միակ մը նոյն իսկ, ինքն Արքահամբ: Մեկուսացնել զայն իր բնական միջավայրէն, փոխադրել զանիկա ժողովուրդներու մէջ որոնց հետ հասարակաց ոչինչ ունէր, որպէսզի հոն անոր միջոցաւ նոր ժողովուրդ մը հիմնէ, իր փրկագործական արարքին առաջին գործը՝ փրկութեան պատմութեան վճռական ըսկըզնաւորութիւնը եղաւ ասիկա: Այդ կերպով պատրաստեց Աստուած այն գործիքը, զոր պիտի գործածէր երկրի բոլոր ժողովուրդներու մօտ (Իմնք. ԺԲ. 3), անո՛ր միջոցաւ անոնց փոխանցելու համար այն օրհնութիւնը, որով անիկա կը պատասխանէր Արքահամբ հաւատքին և հնազանդութեան: Սկիզբէն Աստուած տնօրինեց Արքահամբ ընտանիքին բարգաւաճումը, անոր մէջ վառ պահեց իր ծանօթութեան ջահը, որ կը մարէր ամենուրեք այլուր: Աւելի վերջը, նորէն հանեց զանիկա այն միջավայրէն ուր փոխառնակած էր անգամ մը, եւ ուր ապականուելու վտանգը կը սպառնար անոր, ու զայն Քանանէն Եգիպտոս փոխադրեց: Յետոյ, յանկարծ հեռացընելով զանիկա այդ երկրէն ալ, տարաւ անապատը, ուր հոգածու եղաւ անոր պահպանումին: Անոր տուած իր օրէնքովը, բոլոր միւսներէն կատարելապէս անջատ ժողովուրդ մը ըրաւ զայն, և միւսնոյն տունն սրբագործեց զայն իր ծառայութեան համար այն պաշտամունքովը զոր հաստատեց անոր սրտին մէջ:

Արդ, այս դաստիարակչական աշխա-

տանքին մէն մի դիմայեղութեան հետ կատարուեցաւ յայտնութիւն մը, որ կը ծառայէր հասկնելու անոր իմաստը: Երբ Աստուած (Ելոհիմ) կանչեց Արքահամբ, անոր յայտնուեցաւ էլ-Շասայի անուան տակ, Ամենակարողը, որ տէրն ու տնօրէնն է տիեզերքի ու ժերուն: Եգիպտոսէ ելած տանին, այս Ելոհիմ Աստուածը յայտնուեցաւ Մովսէսի, եւ անոր միջոցաւ իր ժողովուրդին՝ իր Եհիդն (Եհովա) հանգամանքովը (Ել. 2. 3, Գ. 14-15): Այս անունը առաջուց բոլորովին անձանօթ չէր, բայց չէր տակաւին այն անունը որո՞վ ստվորաբար կը կանչուէր Աստուած: Այս ա՛յն անունն է զոր կը թարգմանենք Յաիւսեմական բառով. «Որ էն և եղիցի», այն էակը, որ ինքն իրմէն զոյ է. ո՛չ միայն ուրեմն չզօր էակը, այլ նաեւ Բացարձակ էակը, այն որ միայն է, բառին լաւագոյն իմաստովը, որ, բոլոր միւսներուն պէս, ի չգոյէն զոյ չէ որ անցած է, այլ որ տէր է զոյութեան՝ իրեւ իր բնութեան, և որուն կամքովը միայն, հետեւաբար, ամէն էակ զոյ է, և որ միայն իր ձեռքին մէջ ունի մարդկութեան և տիեզերքի պատմութեան ընթացքը: Անիկա Խորայելի կը հանդիսանայ իրեւ իր ազգային Աստուածը: Անո՞վ է որ բովանդակ մարդկութիւնը, բովանդակ տիեզերքը պիտի գործակցին իրարու՝ բարին համար այս ժողովուրդին, որ իր ծոցին մէջ կը կրէ աշխարհի փրկութիւնը: Աստուծոյ՝ իրեւ Ամենակարող յայտնութիւնը խորայելեան կրօնը կը զնէ զերիվերոյ բոլոր միւսներէն. անոր յայտնութիւնը իրեւ Եհովա, զայն կ'ընէ միակ կրօնը: Այս անունին մէջ կայ ամենաբացարձակ հերքումը որեւէ ուրիշ աստուածութեան մը զոյութեան, ծայրայեղ պատերազմի յայտարարութիւն մը՝ ուղղուած ունէ արարածի աստուածացման և ունէ բազմաստուածեան կրօնի դէմ: Ասո՛ր համար է որ այս աստուածային անունը իրր խարխիւս դրուած է կարծես ընտրեալ ժողովուրդին զոյութեան մէջ:

Ահաւասիկ սկզբուքը, որուն վրայ հաստատուեցաւ Սինայի օրէնսգրութիւնը: Ելոհիմի այս յայտնութիւնն իրեւ Եհովա, Խորայել Աստուծոյ անդրանիկը կը լինի, անոր ծանօթութեամբը լուսաւորած առաջին ազգը. այն ժողովուրդն է անիկա, որ



հրաւէր ստացած է աշխատելու հեթանոսութիւնը տապալելու, Աստուծոյ այս աշխարհի վրայ թաղաւորութեան ու փառքին ախոյեանը ըլլալու:

Այսպէս, փրկութեան պատմութեան, իր առաջին ծագումներէն, կ'ընկերանան, ու կարծես իրեն համար կը ստեղծուին յայտնութեան շարք մը գործեր: Աստուածային գործին կատարելները, Աբրահամ և Մովսէս, վերահասու կ'ըլլան Աստուծոյ գիտաւորութեան, որպէսզի անոր գործադրումին նուիրուին, ու իրենց միջնորդութեամբ, ամբողջ իրենց ժողովուրդը կ'ընդունին այդ լոյսին հաղորդութիւնը, իւրացնելու և իր հաւաքական ու անհատական կեանքին մէջ իրականացնելու համար զայն:

Պիտի չհետեւինք այս պատմութեան բոլոր մանրամասնութիւններուն: Ո՞ր որ զայն ուսումնասիրած է, զիտէ թէ ամբողջովին միեւնոյն օրէնքին ենթարկուած է անիկա: Մարգարէական յայտնութիւնները կը լուսաւորեն՝ ժողովուրդին ծոցին մէջ՝ աստուածային գործին մէջ մի զմայեղումները: Դաւիթ, Սողոմոն, Ռոբոլամ, իրենց յաջորդները, ընդհանուր ժողովուրդը, մինչև գերութիւն, կ'ընդունին այցելութիւնը մարգարէական լոյսին, որ սահմանուած է մերթ խոնարհեցնելու՝ մերթ բարձրացնելու և մերթ ուղղելու զանոնք: Ինչպէս հօր մը իր զաւկին ուղղած հրահանգութիւնները անբաժան են այն միջոցներէն, զորս կարելոր կը համարի նա ի գործ դնել անոր յառաջդիմութիւնները խթանելու համար, նոյնպէս աստուածային խնդարից կամ վշտագին յայտնութիւնները անդադար կ'ամրապնդեն այն արտաքին տնօրինութիւնները, որոնց ենթական էր Խորայէլ, ու կը ջանան արգաւանդ գործել զանոնք անոր բարոյական ու իմացական զարգացումին համար: Տաճարին շինութիւնը, Բաբելոնի գերութիւնը, աքսորէ զարձը, բոլոր այս վճռական զմայեղութիւնները կը յայտարարուին կամ կը մեկնաբանուին մարգարէական ազդարարութիւններով: Այս կերպով է որ պիտի արդիւնաւորուէր բարոյական ազդեցութիւնը՝ զոր անոնք պէտք է ի գործ դնէին: Հոս կը հաստատենք օրէնք մը, զոր Աստուած ինքն իսկ կ'արտասանէ, երբ կ'ը-

սէ. «Միթէ թաքուստ ինչ իցէ յԱբրահամէ ծառայէ իմէ՛ք զոր ինչ գործելոց եմ. քանզի զիտէի եթէ պատուիրեսցէ որդւոց իւրոց և տան իւրոյ, յետ իւր, պահել ըզճանապարհս Տեառն» (Ծննդ. ԺԲ. 17-19): Նոյն այս օրէնքն է որ Ամոփս մարգարէն կը բանաձևէ, երբ կ'ըսէ. «ո՛չ արացցէ Տէր աստուած իրս ինչ եթէ ոչ յայտնեսցէ զիւրաւան ծառայից իւրոց մարգարէից» (Ամ. Գ. 7): Իր ժողովուրդը դաստիարակելու և փրկագործութիւնը պատրաստելու համար Աստուած գործած է ոչ միայն իրրեւ ղէպքերուն տէրը, այլ և խօսած է, իր գործերը բացատրելու համար: Վերջապէս, երբ հասած է գերագոյն շնորհը, փրկութեան շնորհը իրագործելու վայրկեանը, ուրիշ կերպ չէ գործած. և, ինչպէս տեսնենք, կատարեալ յայտնութիւնը վերջնական գործին էական տարրերէն մին է եղած:

Հիմակ կրնանք ա'լ հասկնալ թէ ինչ է Ս. Գիւրբը: Անիկա չգրուեցաւ, ինչպէս հատուքի Մանրութունք մը, որուն վախճանն է յայտնել կրօնական ճշմարտութիւններու կամ բարոյական պատուէրներու գրութիւն մը. անիկա աստիճանաորեալ պատկերն է պատմութեան մը, որուն Աստուած է որ կ'ուղղէ ընթացքը, վասնզի այդ պատմութիւնը պատմութիւնն է ի՛ր իսկ թագաւորութեան զարգացումին, տեղեկատուութիւնը այն գործին՝ որուն միջոցաւ երկրի վրայ կ'իրականանար աստուածային ծրագիրը: Այս գործը, իր զարգացումին մէջ, միշտ կը պարունակէ անձկապէս միացած իրողութիւններու երկու կարգեր. աստուածային գործեր և աստուածային խօսքեր. պատմական տնօրինութիւններ և զանոնք լուսաւորող յայտնութիւններ: Սուրբ Դրքի գծած պատմութեան այս երկու գործօնները իր միջոցաւ միայն ծանօթ են մեզի: Մենք այս յիշատակարանին միջոցաւ է միայն ուրեմն կրնանք օգնել Աստուծոյ գործին, թէ՛ իւրացնելու համար զայն, և թէ՛ ուրիշներուն ներկայացնելու համար զայն: Այս է որ կը շինէ անոր միակ արժէքը՝ անոր անբաղկատելի արժանիքը: Ու այս է որ կ'արգարացնէ անոր Դիրքերու Դիրքը՝ Դերագանց Դիրքը անունը:

Յաճախ վիճելի դատուած է խորայէլի



և և մարդկութեան պատմութեան ընկերացած շարք մը աստուածային միջամտութեանց և յայտնութեանց զաղափարը: Ումանք կ'ընդունին, արդարեւ, զարգացում մը՝ աշխարհի պատմութեան և մարդկային գիտակցութեան մէջ, և և կ'ընդունին թէ այդ յառաջդիմութիւնը համաձայն է անտեսանելի Արարչին գիտաւորութեան. բայց չեն ընդունիր որ նա որ և է կերպով միջամտելու կ'ըլլայ անոր: Այդ յառաջդիմութիւնը կատարուելու համար, կը խորհին անոնք, բաւական է գործադրել միայն այն բնական կարողութիւնները, որոնցմով Աստուած սկիզբէն օժտած է զմեզ. ինչպէս, բանականութիւնը, գիտակցութիւնը և կամքը: Այս ձիւրքերուն շնորհիւ, մարդը կոչուած է ինքնաբերաբար յառաջդիմել: Բնական կերպով մը իր ծանօթութիւնները կ'աճին, իր բարոյական ծանօթոյթիւնները կը գտնուին, կամքը կ'ուղղուի, ու յառաջդիմութիւնը կը կատարուի ինքնիրեն, առանց որ ասոր համար աստուածային ուղղակի միջամտութեան պէտք ըլլայ:

Ումանք կը զիջանին աստուածային որոշ գործակցութեան մը հարկին, բայց այս վերին գործակցութիւնը յարակից և զուտ ներքին բան մը կը համարին: Կը մտածեն թէ անսահման Հոգին մարդկային հոգին կը պահէ և կը մղէ իր յառաջդիմութիւններուն մէջ, հետզհետէ անոր մէջ բողբոջեցնելով սերմերը ճշմարտութեան և սրբութեան, զորս կանխաւ դրած է անոր մէջ, ու միեւնոյն ատեն ուղղելով արտաքին զէպքերը, անոնց գործակցել տալու համար մարդկութեան իմացական ու բարոյական զարգացումին:

Շարունակելի

Կ. Ա. Մ.



## Ս. Կ Ի Ի Բ Ե Ղ Ի Թ Ո Ւ Ղ Թ Ը

ԱՌ ԿՈՍՏԱՆԴ ԿԱՅՍՐ

Անոնց համար՝ որ կը փափարին աշխարհաբարի վերածուած ձեռով ունենալ երևման Խաչին Կիրակին կարգացուած Կիւրեղ եպիսկոպոսին թուղթն առ Կոստանդ կայսրն. ներկայս կը դրուի հոս ի դիւրութիւն:

Աստուածասէր և բարեպաշտ Կոստանդ օգոստափառ Թագաւորին՝ երուսաղէմի Կիւրեղ եպիսկոպոսէն ողջոյն խնդալից:

Վայելուէ է որ ես քեզի ուղղեմ և գուն ընդունիս այս առաջին նամակը զոր երուսաղէմէն կը գրեմ քու աստուածասէր Թագաւորութեանդ: Շողովական խօսքերով չէ որ լեցուած է ան, այլ աստուածաստեանական իրողութեան մը ազդարարութեամբ: Գեղեցիկ շարադրութիւն և հարտասանական իմաստներ չէ որ կը պարունակէ ան, այլ սուրբ աւետարանիչներէն կանխաձայնուած և վկայուած բաներու ճշմարտութիւնը:

Շատեր իրենց ունեցած պէտքէս թանկագին և շողշողուն քարերով կազմուած ոսկեհուռ պրսակներով կը փառաւորեն քու պատուական գրութիւնդ. իսկ մենք ոչ թէ երկրէն հանուած բաներով կ'ուղղենք պատկել զքեզ, վասնզի երկրաւոր ընծայաբերութիւնները երկրը միայն կ'ունենան իրենց նպատակ, այլ քու աստուածասէր Թագաւորութեանդ օրով հոս երուսաղէմի մէջ տեղի ունեցած աստուածային զօրութեան գործերը կը փութանք իմացել քու բարեպաշտութեանդ: Ոչ թէ՛ որպէսզի անգիտութեան զանազան անհասկացաւորութեանքները կը սորվեցնես այդ մասին — այլ որպէսզի քու զիտցած բաներուդ մէջ աւելի հաստատուիս, և քու թագաւորութեանդ նախկին վիճակը յիշելով՝ երկային պատկներով պատուելիս Աստուծոյ՝ իրեն վայելուէ շնորհակալութիւն մատուցանել, և, թշնամիներուդ վրայ մեծամեծ յաղթութիւններով քաջալերուած, Աստուծոյ իրապէս սիրելի ընծայես քու Թագաւորութիւնդ:

Ասոր համար է որ Տէրը քու օրովդ ալ ահա հրաշքներ կը գործէ: Վասնզի, ինչպէս որ քու աստուածասէր և երջանկայիշատակ հօրդ, Կոստանդիանոսի ատեն, Աստուծոյ շնորհիւ երուսաղէմի մէջ գտնուեցաւ փրկարար խաչափայտը, ու սուրբ տեղերը իրենց մէջ ծածկուած այն որոշութիւնը պարզեցին անոր որ սրտագին բարեպաշտութեամբ փնտռեց զայն, նոյնպէս, քու օրովդ ալ, ո՛վ ամենաբարեպաշտ Տէր Թագաւոր, Աստուծոյ երկրաշուք լեցուած այն հին բարեպաշտութիւնը նորոգուած ըլլալով, այս անգամ սակայն ոչ թէ երկրի՝ այլ երկնքի վրայ տեսնուեցաւ հրաշքը, ու մեր Տէր Յիսուս



Քրիստոս փրկչին եւ Աստուծոյ միածին որդւոյն լուսանշող խաչը, որ մահուան դէմ յաղթութեան խորհրդանշանն է, ճառագայթափայլ եւրեւցաւ Երուսաղէմի վրայ։ Որովհետեւ Պէնտէկոստէի այսինքն Յիսնանց օրերուն, օրուան ժամը երկբին, ամենայալով խաչը, յոյսով ձեւացած, երկնքի վրայ, սուրբ Գոգոթթայէն մինչև Զիթենեաց սուրբ լեռը երկարած կը տեսնուէր ցոլացիկ։ Ոչ թէ միայն մէկ երկու հոգիներու երեւցաւ անիկա, այլ ամբողջ սուրբ քաղաքիս ժողովուրդին։ Ոչ թէ վաղանցուկ կերպով և առաջօք տեսիլի պէս, այլ երկար ատեն տեսնուելով երկնքի վրայ, ու իր բոցաճաճանջ փայլումովը արեւուն ճառագայթներուն յաղթելով, վասնզի ինք պիտի յաղթահարուէր անոնցմէ, եթէ արեւգակէն աւելի զօրաւոր չը ցուցնէր իր ճառագայթները։ Այնպէս որ ամէնքը առհասարակ, սուրբ քաղաքիս ամբողջ քաղմութիւնը, տղաքներ ու ձեռեր, այրեր ու կիներ, և ամէն հասակի պատկանողներ, նոյնիսկ աղչիկներ, ընկներ եւ օտարներ, քրիստոնէաներ և ուրիշ տեղեւէ եկած ազգեր, ամէնքն ալ աստուածատեւութեան սուրբ երկնիւղով և ուրախութեամբ համակուած, սուրբ եկեղեցին վազելով, կարծես մէկ քերանով՝ Աստուծոյ սիրագործ Միածին Որդին կ'օրհնարանէին։ Ու այսպէս, փորձառարար և իրապէս տպացուցեցաւ թէ քրիստոնէից ամենաբարեպաշտ հաւատքը, ոչ թէ իմաստասիրական վրաստելով՝ այլ նաև սուրբ հոգիին զօրութեամբն ու յայտնութեամբը կը հաստատուի, ոչ միայն մարդոցմէ կը պատուուի, այլ նաև երկնքէն՝ Աստուծոյմէ կը վկայուի։

Արդ, որովհետև մենք Երուսաղէմ քանակներս այդ սքանչելիքը ոչ թէ ուրիշներէն լսեցինք այլ մեր աչքերովը տեսանք, Թագաւորաց Թագաւոր Աստուծոյ եւ իր Միածին Որդիին մատուցինք՝ պատշաճ կերպով՝ մեր շնորհակալութեան երկրպագութիւնը, եւ տակալին պիտի մատուցանենք։ Զեր աստուածասէր Թագաւորութեան համար եւ սուրբ տեղեաց մէջ հանդիսաւոր ազօթքներ ըրինք և դեռ պիտի ընենք։ Եւ որովհետև արժանի էր որ այս երկնային աստուածատեւութեան համար լուսութիւն չպահէինք, և աւետիկնք զայն ձեր աստուածասէր բարեպաշտութեան, այս պատճառաւ փութելով անա գրելու այս գիրք։ Ուրպէսզի բոլր յառաջագոյն արդէն ունեցած հաւատքիդ հաստատուն եւ բարի հիման վրայ — որ Աստուծոյմէ քեզի տրուած գիտութիւնն է —, Յիսուս Քրիստոսով աւելի հաստատուն կերպով շինուած յոյսն ալ լընդունելով՝ քաջալերուելիս, և ամէն առաքինական սովորութիւններով տոգորուած, խաչին յաղթութեան նշանը քեզի զօրալիք ունենաա՝ իրրև Աստուծոյ, և պարծանաց պարծանք համարիս զայն քեզի, քեզի հետ ունենալով երկնքը երեւցած նշանը, որուն ձեւը մարդոց ցոյց տուած ատեն կարծես երկնք ինքն իսկ պանծաց։

Բայց պէտք է գիտնալ, ո՛վ աստուածասէր Թագաւոր, թէ այս հրաշքը մարգարէներէն նախագուշակուած և աւետարաններուն մէջ աւան-

դուած Յիսուսի սուրբ բառերովը արդէն նկարագրուած իրողութիւնն մըն է, որ այս անգամ կատարուեցաւ, եւ անշուշտ ապագային ալ պիտի կատարուի յաճախ՝ Վասնզի, Փրկիչը, Մատթէոսեան Աւետարանին մէջ հանդերձնալ իրաց գիտութիւնը իր երջանիկ աշակերտներուն պարգեւած ատեն, անոնց և իրենց հետ եղողներուն խօսելով յայտնապէս նախաձայնելով կ'ըսէր. «Եւ յայնժամ երեւեցի նշան որդւոյ մարդոյ յերկին»։ Եթէ բանաս աւետարանի աստուածային գիրքը, այնտեղ պիտի գտնես այս մասին առաջուց ըսուած վկայութիւնները։ Բայց սըրտագինս կը փափաքեմ որ ամէն բանէ առաջ հոգեհոսն ժողովութեամբ նայիս մեր Փրկչէն յառաջաձայնեալներուն մասին հոն գրուածներուն վրայ. հակառակ աղղկութիւններէ չտարուելու համար, երկնիւղած զգուշութեամբ պէտք է կարգալ զանոնք։

Այս իմ անգրանիկ նամակս, ո՛վ աստուածասէր Թագաւոր, Երուսաղէմէն քեզի զրկելով, իրրև հարազատ եւ ամենաբարեպաշտ մտերիմի մը կը խօսիմ քեզի, և իրրև մեզի հետ երկրպագողի Աստուծոյ Միածին Որդւոյն և մեր Փրկչին, որ, ըստ աւետարանական աւանդութեան, Երուսաղէմի մէջ կատարեց իր փրկութեան մատակարարութիւնը։ Որ այստեղ ոտնակոխ ըրաւ մահը, եւ իր պատուական արւելումը շնչեց եւ սրբեց մարդոց մեղքը, և իրը Աստուծոյ, կեանք անապականութիւն եւ հոգեւոր եւ երկնային շնորհք պարգեւեց բոլոր իրեն հաւատացողներուն։

Ամենաթագաւոր Տէրը, որ տուիչ է ամէն կերպ բարութեանց, թող պահպանէ զքեզ զօրութեամբ և շնորհօք, և ա՛լ աւելի մեծամեծ բարեպաշտութեան գեղեցիկ գործերով, և զարքարէ թագաւորական հարազատ թագը՝ զաւակներու քաղմացումով, եւ, ի պարծանս քրիստոնէից եւ համայն աշխարհի, երկար եւ բազում տարիներու խաղաղութեամբ պահէ զքեզ ամբողջ ընտանիքովդ։ Եւ ամէն մասամբ զարգաբերով զքեզ վարքով, եկեղեցիներու հանդէպ քաղցրութեամբ, և կայսերական իշխանութեան վայելուչ մարդասիրութեամբ, և առատապարգեւ բարեպաշտութեամբ, երկարամեայ անդորութեամբ, ամենուն շնորհէ զձեզ ամբողջ տունովդ հանդերձ, ո՛վ աստուածասէր և օգոստափառ Թագաւոր։ Ո՛ղջ լեր Աստուծոյ։





## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### Մ ՈՒՆՋ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ըսի ես իմ հակասագրիս. կը հետեւիմ հեզի, որ մութ  
Գիծերը միտ կը փողարկես. ես որ ինձ բնաւ չես խօսած սուս:  
Առաջնորդէ՛ ինձի. բայց այս աչքես պէտք է տեսնեն ոտներս.  
Պէտք է մըլտեմ նայուածքս ըստ պատշաճագոյն կամարէն ներս,  
Զոր չը գաղէ պէտք է դիմակը մասներուդ սիբիլական:

Համբ՝ անըրեունց, ան զիս փառաց՝ տարաւ դէպի անտար խոր,  
Ուր զազաններ կը սլոքային, ուր կ'երգէին հաւքեր աղուոր,  
Դէպի ծործորն՝ ուր կը զրզլար նարհաս խոխոջն առուակներուն,  
Ու անցնելով լերկ ժայռերէն, խարտաւ դաշին ծոցէն սիրուն,  
Կ'երթար մինչ ափն, ուր ջուրերուն վրայ կը փնանայ լուս՝ լուսընկան:

Հոն անոր ձեռքն երկարեցաւ դէպի անդունդը միգամած,  
Ուր սահմանին կուտայ ցոյց գիծը՝ ոտներուն հոն խիզախած.  
Ու մինչ զրլսով նըշան կ'ընէ ան ինձի, ես իրեն կ'ըսեմ.  
«Գիտե՛մ». — հոն վարն, այդ միջոցին, ծովը կ'ուլար երգ մը վըսեմ.  
Դրախտի ցոլքեր կը պըսպըղար կարծես ըսուերը ոսկեզօծ:

«Գիտեմ, այո՛, գիտեմ քէ հոս է տեղը իմ մեծ լըռութեան.  
Պիտի փնանամ հոս, երազէ զերծ, անտանջանք, մինչ յալիսեան:  
Շատ անգամներ ես այս վայրկեանն երկիւղախառըն ուզեցի.  
Տեսնելով խուլ Հընձող մը որ, մանգաղն ի նօն, կուգար ինձի:  
Բայց դուն որ զիս հետըդ բերիր անձայն, աննիկ, աչքերս զոց,

«Պիտի չկրնա՞ս յայտնել ինձի արգետօք, քէկուզ նըշանացի,  
Ինչո՞ւ բերիր զիս այս երկար հանապարհէն բոկազնացի,  
Որմէ կը թուին խորիւ մարդոց փայլերն ուժգին փամհանքով.  
Զի մեծ համբէն կ'երթան գրեթէ ամէնքն հանդարտ ու փոքիւ փոքիւ:  
Իրենց համար վաղուան կայանն այսօրուրնէ որոշելով:

«Ու ես մըտայ փու հետէդ անտառին մէջը երազին,  
Անհոգ՝ քէ ի՛նչ միտքեր էին, զոր հոն շատեր կը փաղէին:  
Ականջ դրի շրթնջիւղին բնակիչներուն իր անհանգիստ,  
Թըլչնոց ձայնին, ու աւագին վրայ փըրքըրող կոհակին խիտ.  
Ամէնքը բան մ'ըսին ինձի. դո՛ւն լոկ մնացիր անխօս՝ անխոռով:



Աւասիկ, արդ պառկած եմ ես այս միեւնոյն ավուսինին վրայ.  
 Ուր պիտի որ մ'ամէն քայլերը մահացուաց յանգին անխնայ,  
 Հրեշտակային կոչերուն քէ՛ իսկ հետեւած լինին կամ ոչ.  
 Իմ հեռաչու գնացէս ինչ ի՞նչ բերած եմ ես ձեռքով դողդոջ,  
 Բացի ծակուած այս փայտէն, ո՛վ Պան, զոր կուսամ բազինիդ ձօն:

«Ի՛նչ, ի՛նչպիսի ձայներ հընչած են շինական այս սրինգէն, որ  
 Կ'երգէր յաջո՛ղաբար սրբի թրնդիւններով դաւնակաւոր,  
 Անեղծական սէրն, անոր հրայրն, ու նըւաղումը նեւ ի նեւ.  
 Եւ որ դարձնել կուսար երբեմն կըռոյթով մ'արագ, քերել,  
 Չեր կախան, ո՛վ Սիլուաններ, ու կասարել Մուսայֆ, ձեր տօնն:

«Յաւերժական կուծփին վըրայ նըւիրական այս մօրը հին՝  
 Բնութեան, ուր միտ կը փընտնեմ ես, վաղուց, լոկ բառ մ'աստուածային,  
 Ի՛նչ եմ գրած որ գոհացնէ իմ սովամահ հոգիս հըգօր,  
 Անվիրպական յո՞յս մը արդեօք, քէ գիտութիւն՝ դառն ու խոժոռ.  
 Պատգամներ՝ հիտ ու ապահով, շըռո՛ւնչ մ'աղնաս եւ ընդունայն:

«Կ'երթայի ես մէն միայնակ, բայց փընջելով մարդոց համար,  
 Սիրոյ կարմիր ծաղկունք, շուշանք՝ սրբի զեղման գեղայամար:  
 Եթէ կիսով չափ հասուցած են ինձ՝ ինձմէ առածներնին,  
 Վարձքս է կասար: Ես գումարները չեմ կըռած ամենեւին:  
 Ու վիտս այնքան չէ խոր ու մեծ, որչափ է գութըս բարձր ու լայն:

«Սակայն ինչո՞ւ մասնանըւում ըլլամ ես սոսկ իմ այս ջանքէս,  
 Ի՛նչ եմ կըրած, ի՛նչ եմ ուզած, ի՛նչ է այն զոր հասկցած եմ ես.  
 Ո՞վ գիտէ բուն իմ այս դիտումն՝ ոյր վարձքն է այս տառապանքն իմ.  
 Ի՛նչ է նպատակն այս անդադար ըստեղծումին՝ ում կը նըզնիմ.  
 Յիշատակներ աւելի պե՞րն, քէ բեկորներ յաւերժական:

Մահը մեզի չի տար ոչինչ՝ իբրեւ կեանքի բացատրութիւն.  
 Երկինքի կարգը ահաւոր չ'եզրակացներ ոչինչն անհուն:  
 Ուրուական դու, ոչի՛նչ, ոչի՛նչ, բայց բառ մը միայն, բառ անձկայրեաց,  
 Կայ ու կը մնայ, կառչած դեռ հոն, խորն հոգիի մը յագեցած:»  
 — Ու մասն անոր, կողիս կանգնած եւ փանդակուած ֆարի մը վրան,  
 Գըծեց սա բառը. ԸՆԴՈՒՆԷ. — ու փակեց աչքս՝ մահուան բունն:

Թ. Ե. Գ.

MAURICE POTTECHER



## ԱՐԱՐԱԾԷՆ ԱՌ ԱՐԱՐԻՉ

Գիտե՛մ, ո՛վ Տէր, քէ տեղե՛րքն ըստեղծեցիր  
 Իր անցաւոր ու բազմազան վայելքներով,  
 Դաւանակեցիր ըսկիզբն ու վերջ, արժէ՛ք տրիք  
 Մէկուն՝ միւսով:

Կու գայ գարո՛ւնն ու կ'անցնի միշտ, միայն յուշեր  
 Կը բողբու իր նամբուն վրայ աներկեան.  
 Սէ՛րն ալ կու գայ եւ օր մ'անշունչ, յոգնած ու ծեր,  
 Կ'իջնէ դամբան.

Կ'ելլէ արե՛ւն ու կ'ընթանայ իր վախճանին,  
 Կ'իյնայ ծաղի՛կն աւանահար եւ անկենդան,  
 Կը վազէ ծով՝ լեռան ծոցէն ջրովէ՛ծն ու ժգին,  
 Ես՝ գերեզման:

Ըրէ՛, ո՛վ Տէր, ըրէ՛ այնպէս՝ որ ամէ՛ն ինչ  
 Ծընի, ապրի, լայ, ծիծաղի եւ հուսկ լրո՛ւէ.  
 Տարրերուն դէմ կըռիւէս ետ՝ բոլ հասնի նինջ  
 Ու զիս պատէ:

Ալիքներո՛ւն՝ տո՛ւր մըռընչել ժայռերուն դէմ,  
 Կարկուտներուն՝ ծեծել լեռնե՛ր ու քաղաքներ.  
 Քամիներուն՝ ցրնցել ծառե՛ր գեղեցնադէմ,  
 Կայծակներուն՝ պատնէ՛լ ամպեր:

Փոքորիկէն յետոյ, սակայն, ծովուն վրայ  
 Տո՛ւր լուսնակին համասրփուել արծա՛ր շողեր  
 Նաւազներուն՝ առագաստներ պարզել, ապա  
 Ինձ՝ երազել:

Ծաղիկներուն՝ ողջագուրել ցո՛ղն առաջին,  
 Մըշակներուն՝ ըմպել արփին մեհախաթել,  
 Սոխակներուն՝ երգել յուշիկ ու քաղցրագին,  
 Եւ ինձ՝ սիրել:

Աղբիւրներուն՝ հոսի՛լ կանաչ մարգերն ի վար,  
 Կոչնակներուն՝ հընչել ծափեր կամ հըծիւններ,  
 Խորաններուն՝ պատարագել փառփոյ համար,  
 Ինձ՝ աղօթել:

Պանդուխտներուն՝ զբնել շուտով դարձի նամբայ,  
 Հիւանդներուն՝ դառնալ կեանքին հետք ու զուլալ.  
 Սիրողներուն՝ շինել տառակ բո՛յնն ապագայ,  
 Եւ ինձ՝ յուսալ:

Ծաղիկներուն, զեփիւռներուն եւ արեւուն  
 Տուր բողբոջել, շընչել մեղմիւ ու ջերմանալ.  
 Դրախտէ՛դ ներս, դրախտէ՛դ դուրս՝ տո՛ւր իմ հոգւոյն  
 Մի՛շտ հաւատալ:



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՂԲԱՏԻ ԴՊՐՈՑԻ ՄԻ ԳԼՈՒԽ ԳՈՐԾՈՑ

(ԴԵՏԱՇԷՆԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ)

Պ.

Այժմ անցնինք մանրանկարչութեան նկարադրութեան. սկզբում 6ր — 7ա, 8ր — 9ա, 10ր — 11ա, 12ր — 13ա, 14ր — 15ա, խորաններն են, կամար եւ կոշուած, յունարէն *καμάρα* բառի փոխառութեամբ: Առաջին զոյգը վերից վար եւ իրար կցուած երեք կիսաշրջանակներ են, որոնց միջի տարածութեան վերայ գրուած է եւսերիտսի եւ կարպիանոսի թղթակցութիւնը: Կիսաշրջանները անմիջապէս եղբորոջ շրջանակները կապոյտ են, երկու սակեղծերի մէջ, շրջափակուած կարմրագլի մի քառանկիւնում: Այս քառանկիւնու եւ կիսաշրջանների մէջ եղած տարածութիւնը ծածկուած է կանաչ եւ կապոյտ աղւաւանման զարդերով, իրարից բաժանուած ոսկեղծերով: Այս քառանկիւնին շրջանակուած է զարծնու մի աւելի մեծ քառանկիւնի եզրազարդով, որի մօտիւններն են մէջ ընդ մէջ եռատերեւի եւ հնգատերեւի մի շարք, կապուած իրար հետ ցօղուններով, եռատերեւները բոլորակի մէջ, իսկ հնգատերեւները ներքեւից փոքրիկ աղեղներով կապուած նրանց հետ: Եռատերեւների ներքեւի զոյգ թերթերը կապոյտ են, եղբուած սպիտակով, իսկ վերեւի տերեւը, որ բարձրանում է երկուսի միջից, կանաչ տերեւների հպման երկու անկիւններում մի մի կարմիր գնդակ: Հնգատերեւի ներքեւի զոյգը ըստ ամենայնի նման եռատերեւի ներքեւի զոյգ տերեւներին, իսկ նրանցից ծլած կանաչ տերեւները սրածայր. երկու կանաչ տերեւի մէջ տեղում մի կարմիր տերեւ: Շրջանակի ձախ թևի մէջ տեղում մի վարդեակ, կանաչ եւ կապոյտ տերեւներով, պորտում կարմիր գնդակ: Վերեւի անկիւններում մի մի երկար եւ ոճաւորած հնգատերեւով զարդ. ներքեւի տերեւները կապոյտ, միջինները կանաչ, իսկ ծայրինը

կարմիր, տերեւների հպման տեղերում մի մի կարմիր գնդակ: Ճակատի զարդը կապուած է արմաւենիկից: Բոլորովին այն կազմութիւնն ունի եւ 7ա., միայն այս տեղ աղւաւածե զարդերը անկիւնից անկիւն կտրուած, խաչածեւ թեք զծերով, հուպ տուած քառանկիւնների մէջ: Ներքեւի լուսանցքի եզրազարդն էլ ցօղունների հիւստածք է: Արտաքին շրջանակների երկիրը ծածկուած սկեփոշով, բայց արգէն զուեռտուած եւ մասամբ թափուած:

Աւելի հետաքրքրական են 8ր — 9ա. իրար նմանութիւն բերող խորանները, (*պատկեր 1*), իւրաքանչիւրը  $21 \times 14$  սմ. մեծութեամբ, բուն խորաններից չափուած, 8ր-ի լիւնեւի մէջ «Կանոն Ա. յորս ըստ նոսին ածան չորեքին. ածան Մաթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս». իսկ 9ա. «Կանոն Բ. յորս երեքն Մաթէոս, Մարկոս, Ղուկաս» գրուած: Առաջին խորանը հաստատուած է երեք սեան վրայ, խորիւսների տակ մի գերանածեւ՝ զարդարուած երկարածիկ օղակների շղթայով. խորիւսի յատակն աւելի լայն է, տափակ եւ իրար վերայ դրուած պլիտաներով, ներքեւից վեր հետզհետէ նեղանալով. վերջին օղակածեւ պլիտայի վերայ բարձրանում է սեան բունը, ոչ բոլորակ, այլ տափակ երեսով, ուրեմն քառանկիւնի, միջին մասում հիւսկէն զարդով: Սոյսիկ յատակը գարձնալ տափակ է, իսկ բուն զարդը իրար կպած երկու նշատերեւ, ծայրերը հակառակ ուղղութեամբ, որոնց վերայ գրուած է երկրորդ պլիտան իբրեւ հիմք սիւնների վերայ ձգուած գերանի: Միջին սեան բուն խոյակը գնդակածե է, երկու պլիտայի մէջ, իսկ քարիսին էլ իւր վերին մասում օղակով չէ փակուած, այլ բունը խրուած է պարզ եւ տափակ պլիտայի մէջ: Սիւնների գլխին




ձգուած է գերանը, եղբրուած երկու կողմից բարակ եւ հանգուցաւոր գծով, իսկ միջին տարածութիւնը ծածկուած է զոյգ պարաններէ հիւսուածքով, պտոյտներէ մէջ մի մի կարմիր գնդակով: Մէջ տեղի սեան գլխին լիւնեան է երեքքառորդական կամարի տակ. կամարի ճակատը դարդաբուած եռատերևի եւ հնգատերևի իրար յաջորդող շարքով:

Բուն խորանը քառանկիւնի է, որի ներքին շրջանակը սիւների վերայ ընկած գերանն է, իսկ երեք կողքերից կապոյտ ֆոնի վերայ արմաւենիկի եռաճիւղերով

բուած: Վերին անկիւններէ զարդերն էլ, զբսից, արմաւենիկի եռատերև է, միջինը սուր եւ կարմիր գնդակներով տերևներէ հպման տեղերում:

Բայց աւելի ուշադրութեան արժանին արտաքին լուսանցքի (Տբ.) երկու մարդկային ֆիգուրներն են (պատկեր 1). մէկը ներքեւի, միւսը վերեւի գերանի վերայ կանգնած: Գոցանից ներքեւինը, 11 սմ. մեծութեամբ, հազած է երկար պտուղօտ, մէջքում գօտեւորած, թէև չի երևում այն հաղուստի ծալքի տակ ծածկուած լինելով: Հաղուստի բուն զոյնը զորշ գեղին է, բայց



(պատկեր 1)

զարդեր: Քառանկիւնու անկիւններում ներսից՝ մի մի վէյերածե զարդ կայ, մէկն էլ ճակատում, որտեղից երկու ճառագայթաշերտեր ուղղուած են դէպի ներքեւի անկիւնները, եղբրուած կապոյտ գծերով, իսկ նրանց միջին տարածութիւնը ոսկի ֆոնի վերայ պարանահիւսի ոլորապտոյտով զարդարուած: Նման մի մի ճառագայթ էլ վերեւի անկիւններից ուղղուած են դէպի լիւնեանը: Ճակատի զարդը քառանկիւնից զուրս մի հնգատերև է, երեք կարմիր գնդակներով, առնուած բոլորակի մէջ, իսկ շուրջը արմաւենիկի կանաչ տերևներով զարդա-

զարդարուած երկու՝ կարմիր, վերան սեւազօր զարդերով ծածկուած՝ ժապաւէնով, որ զօտկատեղից մինչև քղանցքի ծայրն է հասնում, իրրե հաղուստի անմիջական մաս եւ ոչ ազատ, եղբրուած սեւ գծերով: Հաղուստի ծալքերը յետեւի կողմից ձևակերպուած են շնորհալի կերպով, սեւ ու գորշ գծիկներով: Գօտից բարձր նոյնպէս երևում են կարմիր ժապաւէնածե զարդերը, որ ուսի վերայից աջից ձախ կտրում է կուրծքը եւ ապա կողքից լիջնում մինչև գօտին, որ հաղուստի բացուածքի եւ կոճկուելու ուղղութիւնն է ցոյց տալիս: Նոյն



ժապաւէնաձեւ զարդը տեսնում ենք եւ թեւերի վերայ, որ իշխանական ծագման նշանն էր հին ժամանակում, հետագայում դառնալով ընդհանուր զարդ։ Ուսերի վերայից նոյնպէս երեւում է այդ կարմիր կտորը, բայց առանց գծազարդերի, եղբւրուած միայն սեւ դժով։ Կուրծքը եւ թեւերի վերին մասը բուն հագուստի կտորից է, բայց ասեղնեղործուած բուսական զարդերով։ Գլխին զրել է բարձր սեւ երկճիւղ գլխարկ. ճակատը, ինչպէս բաժանուած մասերը ներսից, զարդարուն. գլխարկի յետեւի մասի (ճիւղի) գլխին մի ցցուն զարդով։ Գլխարկի, ինչպէս եւ հագուստի ընդհանուր ձեւակերպութիւնը նման Զաքարէ եւ Իւանէ սպասաւորների պատկերաքանդակին՝ Հոռիճոյ վոնքի արեւելեան պատին (տ. մեր Խաղրակեանք կամ Պոռչեանք աշխատութեան շապիկը)։

Դէմքն առանց մազերի, բոլորակ, քիթը, աչքերն ու յոնքերը գեղեցիկ ձեւակերպուած։ Ծակատի վերայ գլխարկի տակից երեւում են գոնգուրների երկու փունջ, իսկ կուրծքի վերայ իջնում են երկու սեւ ժապաւէններ, որոնցմով կապուած են յետեւից, կարծում ենք, մազերը. այս երեւոյթը նկատելի է եւ լուսանցքի միւս ֆիգուրներին նկատմամբ, որոնց մասին խօսք կ'լինի. մանաւանդ, որ մազերը չազանակագոյն են, իսկ երկու ժապաւէնները սեւ թեւերը վերջանում են նեղ եւ կարմիր բազալանով, որ նոյնն է, ինչ որ միւս մասերում տեսանք։ Զախ ձեռքում բռնած է զարդարուն եւ ծոպաւոր սրբիչ մը կամ թաշկինակ. այս մի եւ նոյնը նկատելի է նաեւ վերին պատկերի մէջ, նաեւ կլիկեան շրջանի արքայական պատկերներում։ Աջ ձեռքով բռնած ուսին է զրել մի կեռագլուխ փայտ, կեռից մի ձուկ կախուած. փայտը կարմիր է, ուրեմն, ներկուած։ Վերեւը գրուած է փոքր երկաթագրով. «Շերենիկ քանի դաս ձուկն բեր»։

Կոշիկները երկու գլխաւոր գոյն ունին, կարմիրն ու դեղնաւունը. ճիտկի առաջին մասը կարմիր է, իսկ յետեւին դեղնաւուն, սեւ գծով ստուերած. ճիտկերի վերեւի մասում կապերն էին, որոնց սեւ ծոպերը կախուած են ճիտկերի յետեւի կողմից։ Ոտքերի մասը դեղնաւուն է, իսկ կրունկը մինչեւ ոտքները կարմիր, դարձեալ սեւ գծե-

րով իրարից բաժանուած։ Կոշիկները կրունկ չունին, որի նմանը զործածական է մինչեւ այժմ էլ Վրաստանում։ Անդրվարտիկը, բնականաբար, չի երեւում, անցրած էր ճիտկներէ մէջ։

Պարանոցի տակ երեւում է սպիտակ շապիկը, պարանոցի եւ կուրծքի բացուած քները եղբրուած սեւ գծերով։

ԳՐԱՐԵՒԻՆ ՍՐԲԵՊՍ. ՅՈՎՍԷՓԵԱՆ (Շարունակիկ)

## ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

553 թուի Դուինի ժողովի կողմէն Աղեքսանդրիա ուղարկուած հայ կրօնաւորներէն մէկն էր նաեւ կրօնական ընտիր ճառերու հեղինակ Եղիշէ վրդ. որ եւ Զ. Դարու պատմիչը կը հանդիսանայ. միայն թէ անոր պատմութեան նիւթը դարձեալ ե. դարի հայի զիւցազնական զործերը կը կազմեն, ինչ որ արդէն Փարպեցին մանրամասն պատկերացուցած էր։ Եթէ ընդունինք, որ 553 թուերին Եղիշէն 15 տարեկան կրօնաւոր էր, պէտք է որ ծնած լինի 528 թուին, հաւանօրէն Ռշտունեաց երկրի գիւղերէն մէկում, որու վիճակաւոր Ռշտունեաց Սահակ կապ.ը կարեւոր դեր կատարեց այդ ժամանակները։ Իր բոլոր զրուածներու մէջ նա Աղեքսանդրեան ուսումը կը յեղյիղէ, զնկելով դատուող եկեղեցականներու բերանը կամ դաւանական թղթերու մէջ՝ Փիլոնի մտքերը։ 565 թուերուն իր ընկերներու՝ Մովսէս Խորենացու, Դաւիթ Անյաղթի, Վրթանէս քերթողի եւ ուրիշներու հետ Հայաստան դարձաւ. մի աղմուկովից ժամանակ, երբ Հայ եկեղեցին երկպառակուած էր Սիւնեաց եւ Աղուանից պատճառով, եւ նետորականութիւնը նուաճումներ կը կատարէր։ Միւս կողմէն ալ Յունաց նենգամիտ սաղբաւքներով տիրող Պարսից իշխանութեան դէմ հայ մեծամեծներու կողմանէ խլրտումներ տեղի ունեցան, երբ մանաւանդ իշխանութիւնը Պարսիկներու համար Դուինի մէջ ատրուչան շինեց, որ իր իրաւունքն էր կատարելապէս։ Հայ հոգեւորականութեան գը-



լուսը ու Մանուէլ Մամիկոնեանը Յունաց սնտոի յուսագրութիւններու վերայ վստահացած՝ այդ առթիւ ցոյցեր արին ու այդ իսկ պատճառով մէկը ձեռնուեցաւ, իսկ միւսը սպանուեցաւ։ Ահա մի այսպիսի ժամանակ հայրենիք դարձաւ վառվռուն, կրօնական ոգւով տոգորուած, ջերմ հայրենասէր, խոհուն, մտածող եղիշէ կրօնաւորը։ Նա Հայոց Հայրապետանոցի գրան երէց դարձաւ՝ իր կրօնական հմտութեան համար։ Մտերմացաւ Դաւիթ երէց Մամիկոնեանի հետ, որու առաջարկութեամբ 568—570 թուերուն գրեց իր «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»։ 570 թուի վերջը, երբ անխոհմ ապստամբութեան պատճառով իր սիրելի հայրենիքը քար ու քանդ եղաւ, նա Մոկրաց լեռները քաշուեցաւ և ապա իր հայրենի Ռշտունեաց գաւառը, ուր և վախճանեցաւ 580 թուերուն։

Եղիշէի Զ. Դարու մատենագիր եղածին հաւաստիք են այն մանր ու խոշոր փոխառութիւնները, որ իր ընկերներու ձեռքով Զ. Դարու մէջ կատարուած փոխոյն գործերէն նա կատարել է։ Յունաբանին Վասակ Մամիկոնեանի յիշատակութիւնը, որուն մասին Փարպեցին ոչինչ չգիտէ, զոր սակայն Զ. Դարու յոյն պատմիչ Պրոկոպիոսը կը ճանաչէ։ Ո՞վ է Դաւիթ երէց Մամիկոնեան, որու եղիշէն իր պատմութիւնը կը նուիրէ։ «Բաջ» մակդիրը խնդրողի աղնուական ծագումը կը յայտնէ։ Բայց «երէց» բառի տակ՝ կաշկանդուած մտքերն անպատճառ հոգեւոր անձնաւորութիւն կ'որոշեն։ Ինչո՞ւ այդ բառի տակ «մեծ» իմաստը չըմբռնել՝ համանուն անձերէն մէկը նոյն տոհմի մէջ միւսէն զանազանելու համար։ Այս Դաւիթ երէցը ուրիշ անձ է, եթէ ոչ Վահան Մամիկոնեանի Վասակ եղբոր որդի՝ Դրիգորի որդի Դաւիթը։

Դաւթի որդի Համազասպ Մամիկոնեանի համար, որ 658 թուերուն Հայաստանի իշխան կարգուեցաւ և երկու տարիէն մեռաւ, Սերէոս պատմիչը կ'ըսէ «էր այր առաքինի... ընտանեւուն, ընթերցասէր և ուսումնասէր, և ոչ ըստ հայրենի կարգին՝ վարժ և կիրթ հրահանգօք զինուորական վարժից» (Ի. 244)։ Այսպիսի նկարագրի տէր է եղած անշուշտ և ասոր հայրը Դաւիթ, ինչպէս որ կը ներկայացնէ Եղիշէ իր ընծայականի մէջ։

Եւ վերջապէս Եղիշէի գրութեան լեզուն իսկ չի՞ ազդակիր որ որքան ալ հայեցի՝ կարող է հաւասարուիլ ռակդարեան զեղեցկութեան։ «Դու» անորոշ գերբայի գործածութիւնը, ստորագրականի փոխարէն սահմանականի կիրառութիւնը, յունարան զարոցին յատուկ ամանցումներ՝ ասոնք երեոյթներ են, որ հնդկականին և Դարու շրջանակէն դուրս եղածը ցոյց կուտան, բայց միանգամայն այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ հայ լեզուի գեղեցկութիւնը տակաւին իսպառ խաթարուած էր։ Վերոյիշեալ բոլոր փաստերու անմիջական հետեանքը այն է միայն, թէ Եղիշէն ճշմարտապէս իր նկարագրած իրողութիւններուն ժամանակակից է եղած։

Բայց ինչո՞ւ կը զրէ և ինչ էր Դաւիթ երէցի խնդրի շարժառիթը. այս խնդիրն ո՞նա պէտք է պարզաբանել։

Արդէն Ղազար Փարպեցին Վարդան Մամիկոնեանի ու Վահանի ապստամբութեան պատմութիւնը տուած էր։ Անկարելի է որ այս պատմութիւնը ծանօթ չլինէր ընթերցասէր Դաւթին, քանի որ անիկա գրուած էր Մամիկոնեանց տոհմի գործերը փոռաբանելու համար. և այն՝ Զ. Դարու առաջին քառորդին։ Եթէ Ղազարի պատմութիւնը հասարակութեան լայն խաւերուն ալ ծանօթ չլինէր, ինչպէս Սերէոս պատմիչի անգիտութիւնը ցոյց կուտայ, ան պէտք է որ ծանօթ լինէր այն բազմութիւն Մամիկոնեան ու կամսարական պատանիներուն, որոնց հետ Ղազար մտերիմ յարաբերութեան մէջ էր և անոնցմէ ալ իր պատմութիւնը գրելու ժամանակ նիւթեր քաղեց։ Մեր կարծիքով Դաւթի ցանկութեան նպատակն էր իմանալ, թէ ինչո՞ւ և Դարու այդ կրօնական քղի տակ կատարուած շարժումը կի՞ չունեցաւ. այդ

ՀՄԱՅՆԱԿ — 2011-ի

1. Վահան, 2. Վասակ, 3. Արսաւէս, 4. Վարդան

1. Գրիգոր, 2. Համազասպ

1. Դաւիթ, 2. Վասակ, 3. Մանուէլ

1. Գրիգոր, 2. Համազասպ

1. Մանուէլ, 2. Վարդան

1. Մուսեղ, Գագիկ



շարժման խնամարարությունը, շուտարանությունը, որ թերեւս ժամանակակից դրութիւնը պարզելու առաջնորդ լինէր. իսկ ժամանակակից դրութիւնն այն էր, որ Յոյները՝ իրենց հին սովորութեան համեմատ, նենգամիտ սաղրանքներով խռովութիւն յարուցանելով Պարսից բաժնի հայերու մէջ՝ միջոց ունենային «ի փառս Քաղկեդոնի եւ տոմարին Լեւոնի» յոյն եկեղեցւոյ հօտը ստուարացնելու. Յունակն Ղազար Փարպեցւոյ պատմութեանէն կարելի էր այսպիսի լուսաբանութիւն մը ստանալ, թէեւ Դիւտ կաթողիկոսի յունակն քաղաքականութենէն եւ ասոր հակառակ Վահանի յունակն ընթացքէն հայերն իրենց թունկի քաղաքական ուղղութեան մասին շատ բան կարող էին սովորել հայ ազգի ապագայի մասին, ինչպէս իրաւամբ եւ սովորեցան 506 թուի հակաքաղկեդոնական Դուլինի ժողովի գումարամար: Եղիշէն, այդ պարսկական օրինչտաշխարհով տողորուն՝ կրթուած հայրենասէր երիտասարդը սիրով յանձն կ'առնու իրեն եղած առաջարկը՝ Վարդան Բ. ի անխոհմ ապստամբութենէն երկու տարի առաջ, զրել Եվան Վարդանայ եւ Հայոց պատերազմին: Ընծայականի մէջ ցոյց կուտայ թէ պատմութիւնը զրել տալու մէջ Դաւթի երկրաւոր փառասիրութիւնը զեր չի խաղար, այլ միմիայն երկնային, ճշմարտութեան սէրը. եւ այդ ճշմարտութեան սիրով՝ Երարծրութիւն եղեալ ընդ քեզ զամենայն մրդկածին օղովքդ անցանիցեմք (եւ) ծծելով փոքր ի շատէ յանապական վերին օղոցն՝ առնուցումք զգիտութիւն ի փրկութիւն անձանց եւ ի փառս ամենայաղթ եկեղեցւոյ»: Այս պատկերաւոր արտայայտութեան հիմնական միտքը այն պարզ գաղափարն է, թէ Վարդանայ պատերազմի նման մի խոշոր շարժում, ինչպէս եւ երբ կը ծագայէ «ի փրկութիւն անձանց եւ ի փառս ամենայաղթ եկեղեցւոյ»: Այսպիսի նպատակի մը հասնելու համար կարեւոր է նախ 1. գաղափարով ողբերգութիւն. 2. ընդհանուր ազգային կորովութիւն ու միութիւն. բայց այս երկուքը դեռ բաւական չէ. բայց եթէ մէջտեղ կայ զաւաճանութիւն եւ մատնութիւն, որու մարմնացումը Վասակն է, եւ Յունաց զօրաւոր տէրութեան վատթար յետսակացութիւնը, որ մի

բուն հայ ժողովրդի կորովի պայքարին ոչ միայն իր զինուորական ուժով ու քահանայութեամբ չօգնեց, այլ եւ տմարդաբար *carte blanche* տուաւ Յաղկերախ՝ վարուելու Հայերուն հետ ինչպէս որ զիտէ, այն ժամանակ մի այդպիսի շարժում աղետաբեր է եւ ոչ «ի փրկութիւն անձանց»: Պատմուած փաստերէն այս հետեւութեան կը յանդի եղիշէն: Նա, ինչպէս եւ իր ժամանակի բոլոր Աղեքսանդրեան մտայնութիւնը հակառակ է ապստամբական շարժման: Յունաց խաբուսիկ յորդորներուն վերայ վստահացած. առով, ինչպէս եւ Վարդանանց ժամանակ, կորստեան դուռ մը կը բացուի, որ «Աստուծոյ միայն կարողութիւնն է փակել. այլ ըստ մարդկան սահման, ահա անցեալ է հնար» (Եղ. Եր 139 թէոգ. տղ): Այդպիսի անխոհմ շարժման հետեւանք ոչ միայն այս կամ այն նախարարական տոհմի սպառնումն է, այլ բոլոր առհմերունն ու աշխարհներունը: Այսպէս պէտք է հասկնալ Եղիշէի խօսքերը 138րդ էջի վրայ: Յունամէտ Փարպեցւոյ պատմութեան մէջ այսպիսի մտքեր երբեք չեւտուած չեն: Եղիշէն մինչեւ իսկ իր անտոյգ իրողութիւն համարելով Վարդանի Յունաստան քաշուելու մտադրութիւնը՝ չի յիշատակեր երբեք:

Ըստ երեւութիւն՝ Եղիշէի տոնական ուճը, որով անօղնական մնացած հայութեան կորովութիւնը կը պատկերէ, հակասութիւն մը չի՝ կազմեր բնաւ անոր մտադրեալ նպատակին. ինչ, լալկան ոճով պէտք է ներկայէր կատարուած իրողութիւնը՝ հանուր հայութեան ողին ջլատելու համար: Ներկայ մեր զրականութիւնը մեղօրինակ:

Իբրեւ ոչ ժամանակակից՝ պատմուած դէպքերուն, Եղիշէ անշուշտ ունեցած է աղբիւրներ: Այդ աղբիւրներու մէջ առաջին տեղը Ղազար Փարպեցու դործն է. կապեալ նախարարներու եւ նրանց կանանց կեանքի նկարագրի մէջ երկու պատմիչներն ալ համանման խօսքեր կը բանեցնեն: Ծանօթութիւնը ուրիշ մանր ցուցմունքներէ ալ կ'երեւայ: Բայց կը կարծենք, թէ Եղիշէն հայ աքսորուած նախարարներուն բանտակից ու կենակից Զենակեցի Աբրահամի Համառօտութիւնն եւ ունեցած է, որու մասին Թովմա Արծրունին (Եր.



87-88) յիշատակութիւն կ'ընէ: Անշուշտ այս տեղէն գիտէ Եղիշէն, որ Վասակի «թանձրամիս» անձն է եղած, որ «ոչ ըստ կարգի ունէր գտէրութիւնն Սիւնեաց» իր հօրեղբոր Վաղենակին սպանել տալով. անշուշտ նոյն Արրահամէն առած է դաւաճան Վասակի վերջին օրերու շնչիչ նկարագիրը, որ Ղաղարի մօտ համեմատաբար շատ մեղմ է արտայայտուած:

Վերջապէս Եղիշէն շատ դէպքերու նրկարագրութեան ժամանակ կ'ըսէ. «Յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լինելով». կամ՝ «ոչ ի կարծ ընդոստացեալ... այլ ևս ինքնին անձամբ ի տեղւոջն պատահեցի», Այս ու այլ ասոնց նման կտորներ՝ մնացորդներ կը համարենք Եղիշէնի բուն աղբիւրին, որու հեղինակն է եղած Պարսկաստանի մէջ տառապող Արրահամ Զենակեցին: Այսքանն առ այժմ բաւական կը համարինք. ընդարձակ խօսելը պահելով մեր հայ «Գրականութեան պատմութեան»:

10 Մարտի 1934

Ա. ԶԱՄ.

Երևան

## ՆՕԹՔ ԵՒ ՆԻՇՔ

«Յուսարբ»-ի մէջ իր «Սիւնի զեգերութիւններ» զոյգ յօդուածներով «Թ» հարցը դուրս կը հանէ իր գիծէն, խորհելով թէ Հայ Եկեղեցականութիւնը «հաւատքի պարզութեամբ» ամբաստանող գրքիչը հայրենասիրական հաւատքն է որ ունեցած է ի նկատի եւ ոչ թէ կրօնականը: Ասիկա ճիշդ չէ բնաւ: Ան աղպէս կոչած էր ներկայ եկեղեցականները, միայն անոր համար որ անոնք կը նազանդին անհատական կառավարութեան մը ազդեցութեան (?) տակ զրուած Հայրապետական հրամաններուն: Բայց, եթէ ճիշդ իսկ եղած ըլլար «Թ»-ի նկատողութիւնը, այսինքն եթէ խնդիրը հայրենասիրական հաւատքի մասին ալ եղած ըլլար, մենք նոյնքան անկեղծութեամբ եւ իրաւունքով պիտի պնդէինք թէ վերապրող եւ կեղեցականներն նոյնքան լցուած էինք անով եւ ներ այժմ իսկ դեռ՝ որքան մեր նահատակուած եղբայրները: Հոգեւոր եւ ազգային նոյն այն դատարարութիւնը՝ զոր անոնք ու մենք ստացած ենք երկրի պատուական նոյն զոյգ ուսուցիչներուն առջեւ, ու միևնոյն մտատկաւարը՝ զոր մի-

ասին պաշտած ենք միշտ, չեն կրնար տարակուսելի ընել այս կէտը: Եթէ սակայն «Թ» կ'ուզէ ականարել, ինչպէս կը թուի, քանի մը երկրորդական կէտերու մէջ եղած այն տարբերութեանց, որոնք այսօր թերեւս կը բաժնենք քիչ մը զմեզ իր և իր դադափարակիցներուն հայեացքներէն, նա որ կը գրէ այս տողերը, իր նահատակ եղբայրներէն ոմանց հետ ունեցած զպրօքակից մը տեղեկութեան եւ այլոց հետ ունեցած ուսուցչի և սերտ բարեկամի հանգամանքներովը, այսինքն անոնց հոգեւոյն իր քաջ ծանօթ մէկը, իր բացարձակ իրաւունքին մէջ է յայտարարելու որ իրմէ յիշուած այդ խնկելի գլուխները, Սմբատ, Շաւարշ Գաակ՝ Գեղամ և Եղիշէն, եթէ ի կեանս լինէին, իրենց կեցուածքն ու տեսակէտը մաղի չափ պիտի շտարբերէր իրենց վերապրող եղբայրներուն պարզած տեսակէտէն եւ հետապնդած կեցուածքէն՝ հանդէպ հայրենիքի, եկեղեցւոյ, ազգային ազգային դադափարին և մանաւանդ իրականութեան: Ազգացոյցներ ռեինք մենք այս մասին՝ իրենց կենդանութեան ատեն իսկ յայտարարուած երեւոյթներէ, բայց ո՛չ տեղն է հօս, և ո՛չ ժամանակը՝ այժմ, մանրամասնութեանց մէջ խորանալու: Անկեղծօրէն զօհ ենք «Թ»-ի յորդորականէն, երբ կը խրատէ խօսքի և գործքի մէջ Հտարուիլ երբեք կ'իրքերէ. իցի՛ւ այդ բարի խորհուրդը իրենց ցօղ քաղցրութեան իշնէր նախ ստորոտը եւ անմիջական շրջապատին մէջ այն բնմին՝ ուրկէ կ'ուզէ նա դայն՝ ամենուն: Աւա՛ղ, սակայն, անսուտ է առածը որ կ'ըսէ թէ «աշտանակը չի կրնար լուսաւորել իր օտքը...»: Գալով մեզի՝ մենք ըրած ենք ու կ'ընենք կարելին որպէսզի կրայոյզ սաստիկութեամբ չարտայայտենք ինչ որ կը զգանք ու կը մտածենք ազգին ու անկէջ անբաժան մեր ազգային այս սուրբ եկեղեցիին բարւոյն համար միայն: Կիրքը չէ արդարեւ որ կը շարժէ մեր սիրտը, երբ կ'ողբանք պատուական եղբայրակցի մը խուժ-զուժ սպանութիւնը, այլ մարդկային ամենէն արդար և բնական մէկ զգացումը: Կիրքը չէ բնաւ որ կը վարէ մեր միտքը, երբ կ'արտայայտենք մեր ցաւը՝ տեսնելով որ մարդիկ չեն կրնար հաշտուիլ ոչ իմ եւ ոչ քու կամքով այլ ճակատագրօրէն եկած և մեր Հայրենիքին վարչութիւնը ձեռք առած զօրութեան մը իրականութեան հետ, և ընել ինչ որ պատշաճ է և պիտանի՝ աւելի եւս մշակելու համար այն բարեխօսարութիւնը, զոր կը կարծենք թէ ցոյց կուտայ ան, ահա որ նաւարկութիւններէ քիչ շատ փրկուած մեր ազգային կեանքը հեռացնելու համար բնաֆնէմ: Զգացումներու անխմաստ բռնկումը չէ վերջապէս այլ լուրջ, և, եթէ կ'ուզէ՝ ցաւագինօրէն բարի զգացում մը միայն, որ բառեր զրած է մեր շրջաններուն վրայ կամ գրչին ծայրը՝ բնի տալու համար մեզի թէ ազգային սրբութեանց թանգարանին մէջ պէտք է ըլլայ այժմ Կաղօցնի տեղը, երբ ազգային փիլիզական գոյութեան աննախընթացօրէն հրատապ հարցն է որ պարտի մտադրակցենք ամենքս: Անկեղծ (ինչպէս կը հաւատանք խորապէս) բայց փորձուած



հայրենասիրութիւնը, որով կը յատկանշուին «Թ.» եւ իր գաղափարակիցները, պիտի չհարեանա՞ր արդեօք ստիպել զիրենք որ մեր պատմութեան լոյստօլը նոյնիսկ կարգան եւ ըմբռնեն այս համարտութիւնը: Բագրատունիք, որոնք Բիւզանդական եւ Արարական երկդիւխի այն իշխանութեան տակ տարուբերեալ Հարստութիւն կազմեցին, եւ չունէին իսկ արտօնութիւն դրօշ կրելու եւ դրամ կտրելու, իրենց այդ տեսակ մը ճորտութեան ենթարկեալ զիրքին մէջ ալ իրենց նախորդ եւ հետեւորդ ազգային պետական վարչաձեւերէն նուա՞ղ միակարար ծառայութիւն մը մատուցին ազգին նիւթական եւ բարոյական գոյութեան համար: Կը խորհինք այսպէս, ոչ թէ որովհետեւ րուպսմ է մեր հայրենասիրութիւնը, ինչպէս պիտի փորձուէր կարծել «Թ.», այլ որովհետեւ թերեւս, երազատեալ սկզբունքներէ աւելի իրատես վարդապետութեանց ուշադիր, աւելի խտացած է ան: Ամէնքս ալ զաւակներն ենք եւ պարտինք մնալ այն ազգին, որ իր քաղաքականութեան նշանաբան ըրած ըլլալ կը թուի աստուածաշնչական սա խօսքը: «Ես ննջեմ, այլ սիրտ իմ արթուն կայ»: Բայց հասկնալու համար այս ամէնը, մարդ պէտք է կարենայ զգալ, խորհիլ եւ խօսիլ առանց «կերք»ի:

\*

Շատ տեղ չունինք, եւ բարեբախտաբար, «Բագրատունի» վերջին թիւին մէջ՝ մեր նախորդ թիւին «Ակամայ անդրադարձութիւններ»-ն ի պատասխան՝ երեցած յընդանորն հաշտ տողերէն վերջ մեծ պէտք մըն ալ չենք տեսներ վերջտին դառնալու նոյն խնդիրներուն: Գոհ ենք որ Ս. Ղազարու պատ, Հանդիսարանին խմբագրութիւնը նախընթացապէս յուզած բոլոր հարցերը կ'սլորէ եւ կ'եզրափակէ այս անգամ եկեղեցական Միութեան վերաբերմամբ անհարկի մը մէջ, նկատելով թէ «Եթէ դատապարտելի է եկեղեցական միութիւնը, ինչո՞ւ ապա դարձեալ զայդ կը հետապնդեն մեր աստուածաբանալ Հայ Հայրապետները: — Արդ, դիտել կուտանք սիրով թէ այս պարբերութեան առաջին նախագահութիւնը, անտեղի է բողոքովին: ոչ ոքի համար դատապարտելի է միութիւնը. ու մեր բոլոր ըսածներուն ու գրածներուն մէջ, «Միութեան» մէջ թէ այլուր, չկայ այդ մտքը ոչ մէկ խօսք կամ ակնարկութիւն: Մենք ոչ միայն «Ի կարեւոր մի» կը համարենք բոլոր՝ մանաւանդ հին եկեղեցիները, այլ նաեւ «յերկրորդական» ցանկալի կը դատենք միութիւնը, թէեւ ցաւ ի սիրտ կը հաստատենք նոյն տունն թէ դժբախտաբար անկարելի կը թուի այդ, ցորչափ ինքզինքնին թիւի եւ ոյժի տեսակէտներով մեծ զգացողները ահ ի պարանոց խրոխտանքով կը մօտենան հարցին, ու՞ միութենէ՞ այսինքն զիջողաբար եւ իրաւախօհօրէն դիտելէ աւելի դործը, տիրակալութեան եւ ձուլումի ծրագիր է որ կը մշակեն անոր մէջ: Մեր երջանիկ նախնիք հիշող մեր մտայնութեամբ է որ նայած են խնդրոյն, եւ միշտ նոյն յուսախարութե-

թեամբն է որ հեռացած են անկէ: Վկայ այս մասին՝ Շնորհալոյ նախորդներուն եւ յաջորդներուն, բայց մանաւանդ իր ժամանակի եղածներուն պատմութիւնը եւ մասնաւորապէս բանակցութեանց պատկերը: Աւելի յետոյ, խաչակրաց թուականին եւ մինչեւ վերջը՝ քիչ մը չլսնալով իր խայծ իրենց առջեւ ցանուած քաղաքական յուսադրութիւններէ՝ թերեւս քանի մը քայլ առած ըլլան զէպի վրեժք հրաւիրողները, բայց ամէն անգամուն ալ, թէ՛ խելամուտով եղած խոստումներուն բուն արժէքին եւ թէ՛ թափանցելով մանաւանդ միութեան զիմակին տակ ծածկուած ձուլումի եւ բռնատիրութեան թաքնախտութեանց, երբեք անկեղծ չեն դատած այդ մասին իրենց ուղղուած առաջարկութիւնները, եւ խրտուած են միշտ անոնցմէ: Լամբրոնացի, որ, ինչպէս ծանօթ է, ամենէն աւելի յանդուգն քայլեր առած էր միութենական այս խնդիրներուն մէջ, յիշել պէտք է թէ՛ ո՞րքան տառապած էր ո՞չ այնքան թերեւս իրեններէն դատած մեղադրանքներէն, որքան այն վերաբերմունքէն զոր դատած էր Կ. Պոլսոյ մէջ, ուր ցացած էր թագաւորին եւ եկեղեցիին հրամանաւ, եւ զարձած էր անկէ՝ ստրկացած եւ գուցէ նոյն իսկ խղճատանջ: Կը կրկնենք. Գրիստանէական եկեղեցին մի է արդէն զինքը յատկաւորող վարդապետութեանց եւ իր բարոյական մեծ հիմներուն մէջ. երկրորդական տարբերութիւնները, որոնք միջավայրի, մտայնութեան եւ ազգային եւ պատմական հանգամանքներու հետեանք են զյիսաւորաբար, չեն ստաններ երբեք աւետարանով վերածնուած ազգերու եւ ժողովուրդներու կրօնական միութեան զաղափարին: պէտք է թողուլ որ սերը լրացնէ ինչ որ զեռ թերի կը նկատուի այդ տեսակէտով: Մենք կը կարծենք թէ ոչ թէ վէճերու՝ այլ սիրոյ, այսինքն միմեանց նկատմամբ զիջող եւ խաղաղ եղբայրակցութեան միջոցով է որ որ մը, թէ՛ իսկ շատ ուշ լինի այն, հնար պիտի ըլլայ հարթել վերջնական եւ կատարեալ միութեան ճամբան, եթէ երբեք, հակառակ կրօններու ընդհանուր պատմութեան եւ քրիստոնէական եկեղեցւոյ պատմութեան անցեալի տրեւեալներուն, այսինքն հրաշքով մը, որ մը պիտի տեղի ունենայ միութիւնը:





# Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

## ԱՄՍՕՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

Անցնող Ապրիլ ամսուան ընթացքին, Ս. Աթոռոյ Տփղիս ժողովը հոփը անդամներ ի նիստ գումարուեցաւ իբրեւ Վարչական Մարմին իսկ իբրեւ Կրօնական Գեր. Ատեմն՝ երկու անգամ, նոյնպէս Ռաւմեակոն Խորհուրդը՝ մէկ անգամ, իւրաքանչիւրը զբաղելով իր իրաւասութեան մէջ եղած խնդիրներով:

● Կիր. 1 ապրիլ. — Երեկոյան ըստ Հին Տաւրի, ժամերգութիւն և ս. պատարագ տեղի ունեցան Ս. Գարուծեան մեր վերնայարկ մատուռին մէջ. ապա Ս. Պատրիարք Հօր նախագահութեան կատարուեցաւ մեծաւոյնական և երբազարձ թափօր Ս. Գերեղմանին շուրջը, հետեւորդութեամբ Դպտոց եւ Աստուծոյ:

— Երեկոյին, Ս. Գաղարայ տաճարին մէջ տեղի ունեցաւ Գանձապահի արարողութիւնը. Ս. Պատրիարքը քարոզեց, ներկայացնելով այս ձէպը իբր խորհրդանշան վերջին դատաստանի եւ յաւիտենական արդարութեան, որուն կարօտը միայն կուտայ հոգիին՝ այս աշխարհի կեանքը:

● Աւագ Բշ. 2 ապրիլ. — Ս. Պատրիարք Հայրը, ընկերակցութեամբ արքայան եպիսկոպոսներու, պատուով ընդունեց այցելութիւնը Եփրատէն եկած Վսեմ. Տիկին Աննա Պաթրոս Կազի փաշայի և Տիկին Տօքթ. Խաչատրի մէջմիտ:

● Աւագ Դշ. 3 ապրիլ. — Ս. պատարագը մատուցուեցաւ Ս. Գարուծեան բակի Ս. Յովնանէս հայապատկան մատուռին մէջ:

— Կէս օրէն առաջ, Ս. Պատրիարքը, Տ. Մկրտիչ և Տ. Սմբատ եպիսկոպոսներու եւ ուրիշ վարդապետներու ընկերակցութեամբ Զատիկի չընթրհաւորութեան այց տուաւ լատին պատրիարքարանը և Յրանչիսեան միաբանութեան, և ընդունուեցաւ պատուով. Յրանչիսեանց մօտ տեսաւ նաև նոյն միաբանութեան Հոգիմի ընդհանուր մեծաւորը, որ Ս. Քաղաքս էր այցելարար: Յետոյ այցելեց Անկիլքան եպիսկոպոսին:

— Փոխանորդ Տ. Մկրտիչ արքայան այցելեց կաթողիկ փոքր հասարակութեանց:

● Աւագ Դշ. 4 ապրիլ. — Ս. Պատրիարքը մեծ դահլիճին մէջ ընդունեց, երեկոյին, Զատիկի առթիւ եկած բոլոր ուխտաւորները խմբովին, և ողջոյնի և օրհնութեան խօսք ուղղեց ամէնուն:

● Աւագ Եշ. 5 ապրիլ. — Կէս օրի ս. պատարագը երգուեցաւ Զուգայի եղանակով, ըստ ձայնադրութեան Որ. Էմի Արգարի, շատ յաջող եղաւ և տպաւորիչ:

— Երեկոյի Ռանալուայի արարողութիւնը կատարուեցաւ մեծաւոյն հանդիսաւորութեամբ և պատկառանքով. Ս. Պատրիարքը նախագահեց. տաճարը լի էր հոժ բաղմութեամբ ուխտաւորներու:

տաւոր և տեղաբնակ աղգայիններու. դասը ամբողջ զբաւած էին երգողները:

● Աւագ Ուր. 6 ապրիլ. — Խաւարի գիշերուան արարողութիւնը կատարուեցաւ սրտառու շոգեւորութեամբ. ընթերցուածներն ու երգեցողութիւնք խորագրեցին էին. ամբողջ ժողովուրդը, որուն բաշխուած էր տպագրուած թերթիկներ և վառուած կճատներ, միասին երգեց «Տարածեալ» Ս. Պատրիարքը քարոզեց «Հայր ի ձեռք աւանդեմ զհոգի իմ» բնաբանով. ներկայացուց խոնարհութեան, գթութեան, իմաստութեան, զօրութեան, հշարտութեան և վրկոթութեան հոգին, որ Յիսուսի կեանքը եղաւ համբուն՝ երկրի վրայ մինչև իր վերջին շունչը, և բացատրեց թէ ինչպէս պէտք է ապրինք մենք ևս, որպէսզի մեր ձեռք պահուին Աստուծոյ մեր ընդունած նոյն բարի և անբիժ հոգին կարենանք նոյնութեամբ աւանդել Աստուծոյ:

● Աւագ Եր. 7 ապրիլ. — Տիկին Նուարդ Կիւլպէնկեան, Ս. Աթոռոյ պատուական բարերարին կողակիցը, որ երէկ իրկու ժամանած էր, այսօր այցելեց Ս. Աթոռ: Ս. Պատրիարքը բովանդակ միաբանութեան հետ, Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ պատուով ընդունեց ազնիւ տիկինը, որ յետոյ ուխտաւորական պարտականութիւնը կատարեց Ս. Գլխադիր խորանին առջև, և ապա այցելեց փառանդաւորաց վարժարան և Կիւլպէնկեան Մատենադարան, ուր աշակերտք երգեց ընդունեցին զինքը:

— Երեկոյին անհամեմատ շուքով կատարուեցաւ Քրիստոսի թաղման նախատեսակը, երեսուցէ մահաւ հանդիսաւորութեանց ամենէն չընաղը թերեւ, որ այնքան խորազգաց տպաւորութիւն կը գործէ երկիւղածներուն վրայ:

● Աւագ Եր. 7 Զատիկի ձրագալոյցի առաւօտուն, Ս. Պատրիարք Հայրը և ամբողջ միաբանութիւն, աշակերտք, ժողովուրդ և ուխտաւորք, հիշտ նշանակուած ժամուն, թափօրով դացին Ս. Գարուծիւն, ուր, ժամը 12.30ին, աւանդական իրաւանց և սովորութեանց համեմատ և կատարեալ խաղաղութեամբ կատարուեցան լուսահանութեան արարողութիւնը և յետոյ թափօրը, միջազգային խառն բաղմութեան մը ներկայութեան: Թափօրապետն էր լուսահան Տ. Մուշեղ վարդապետը, որ բացառաբար թագ կը կրէր: Ս. Պատրիարք Հայրը և միաբանութեան մեծ մասը ժամը 2.30ին զարձաւ մայրափանք, ուր ժամ մը յետոյ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ ձրագալոյցի հանդիսաւոր և պատարագ, մինչ Ս. Գարուծիւն մնացողներ ևս հոն ներկայ եղան մեր վերնայարկ մատրան մէջ մատուցուած ս. պատարագին:

— Եկեղեցւոյ աւարտումէն վերջ միաբանութիւնը թափօրով ելաւ սեղանատուն:

— Յետոյ Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ Ս. Պատրիարք Հօր ներկայացաւ Սերպ եպիսկոպոս Գեր. Տ. Միլաա Քոփովիչ, որուն կ'ընկերանային երեք քահանաներ և բաղմութիւն երկու սեռէ ուխտաւորաց: Տեղեկութիւններ



տունին Սերգեյանի գաղտնիքն ժամին։ Ս. Պատրիարքը պատուով եւ օրհնութեամբ ընդունեց ամէնքն։

● Կիր. 8 ապրիլ (Ձատիկ)։ — Գիշերային հանդէսն ու թափօրը կատարուեցաւ ի Ս. Յարութիւն, մեծ հանդէսով։ Տ. Մեսրոպ Սրբազան հանդիսաւոր պատարագեց Ս. Գերեզմանին վրայ, եւ քարոզեց «Եւ եղիցի հանգիստ նորա պատուով» բնարանին վրայ, ներկայացուց Քրիստոսի Գերեզմանին ընծայուած տիեզերական պատիւը, իբրեւ պանծացում անմահութեան եւ յաւիտենական կեանքի զաղափարին, որուն պատկն է Փրկիչին Ե. յարութիւնը։

— Պատարագէն վերջ երգածայն թափօրով դարձանք Պատրիարքարան, ուր Ս. Պատրիարքը շնորհաւորութեան եւ օրհնութեան ուղերձ մը քաւ ամբողջ միաբանութեան եւ ուխտաւորաց։

— Սղին խոստութեան պատճառաւ, մեծ անդատանք կատարուեցաւ Մայր Տաճարին մէջ եւ ոչ թէ բակին հրապարակ։

● Բշ. 9 ապրիլ — Ս. Պատրիարքը, ըստ սովորութեան, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ մատոյց Ե. պատարագ մեծահանդէս շուքով։ Եւ քարոզեց, յարութեան խորհուրդին մեծութիւնը ցուցնելով պատմական եղելութիւնէն աւելի՝ անկէջ ծնած բարոյական այն հրաշքին մէջ, որ կերպարանափոխեց կեանքն ու աշխարհը։ Պատարագէն վերջ երբապարձ մեծ թափօրով կենաց փայտի մեծ խաչը շուրջ Եւսեբեանց Մայր Տաճարին մէջ, որմէ յետոյ, Ս. Պատրիարքը ողջերթի եւ օրհնութեան հուսկ խօսքով փակեց Ձատիկական ուխտաւորական շրջանը, մաղթանքներ քննելով Աղգին եւ Եկեղեցիին համար։

— Պատարագէն վերջ, Ս. Պատրիարքը ընդունեց միաբանութեան, ուխտաւորաց, ժողովրդեան, կառավարական ներկայացուցիչներու եւ հիւպատոսական մարմնոյ այցելութիւնները։

● Գշ. 10 ապրիլ — Շնորհաւորական այց տունին մեզ, Դպտի, Ասորի, Հաղէշ եկեղեցւոյ պետերը, ապա Յրաչիսկեանք եւ Լատին պատրիարքարանէն։ Յետիւ Ս. Պատրիարքը, ընկերակցութեամբ Տ. Մկրտիչ եւ Տ. Սմբատ սրբազաններու եւ ութ վարդապետաց՝ այցելեց Յռնաց, այցելութիւն տրուեցաւ նաեւ Ռուսաց եպիսկոպոսին եւ միւս փոքր որթոտոքս եկեղեցիներուն։

● Եշ. 12 ապրիլ — Շնորհաւորական փոխ այցելութեան եկան մեզի Ձատիկ տօնի առթիւ, Յռնաց պատրիարքարանի Տեղապահ Սրբազանը, ընկերակցութեամբ երկուս քիւնդական եպիսկոպոսներու եւ ութ վարդապետաց։ Ս. Պատրիարք Հայրը, Սրբազան եպիսկոպոսաց եւ բաղմաթիւ վարդապետաց հետ պատուով ընդունեց զանոնք Պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ։

— Սոփիայէ սուացուեցաւ հեռագիր, որ կը գումարէ Տ. Ստեփանոս արքեպս. Յովակիմեանի վախճանը։ Ս. Պատրիարքը հեռագրեց ցաւակցութիւն։

● Ուր. 13 ապրիլ — Ս. Պատրիարքը Հօր այցելեց Անդր-Յորդանանի յոյն կաթողիկ եպիսկոպոսը։ Ս. Պատրիարքը ցերեկէն վերջ այցելեց Ժառանգաւորաց վարժարանը։

● Ծր. 14 ապրիլ — Տ. Մատթէոս Սրբազան, որ ձերութեան եւ անառողջութեան պատճառաւ չի մասնակցեր պաշտամունքի սովորական կարգին, քահանայաբար պատարագեց Ս. Գլխազրի սեղանին վրայ, ի հոգեւոր մխիթարութիւն։

Ս. Պատրիարքը ցերեկէն առաջ այցելեց խաւամական ցուցահանդէսը. իսկ երեկոյին, ըստ հրաւերի, ներկայ գտնուեցաւ պատուոյ մեծ ընթերթին, զոր ն. Վ. բարձր Գոմթէրը տուաւ իր ապարանքին մէջ՝ բարձրատիճան հրաւիրեալներու։

— Տ. Զգօն վրդ. Բարգէն սարկաւագի հետ գնաց Ամասն, Տ. Եղիշէ արեղայ՝ Կարապետ սարկաւագի հետ՝ Գազա, զատկական պաշտամունքի համար։

● Կիր. 15 ապրիլ — Նոր կիրակիի առթիւ ընդհանուր նահատակաց հոգեհանգիստ կատարուեցաւ Ս. Փրկիչի վանուց եկեղեցին, ուր մատուցուեցաւ Ե. պատարագը։ Ս. Պատրիարքը քարոզեց եկեղեցւոյ մէջ եւ Տ. Տիրան վրդ. յետոյ՝ գերեզմանատան մէջ, լեզեռնականներու շիրիմին առջեւ։ Երկու խօսուածներուն եւ խմաստն այն էր թէ որպէսզի կատարուած նահատակութիւնը իր արժէքին յանդամ լինի, պէտք է որ վերապրող հայութիւնը գիտնայ ապրիլ ճշմարիտ ազգաբնութեան պարկէշտ եւ խաղաղ կեանք մը։

● Բշ. 16 ապրիլ — Ս. Պատրիարքը, Տ. Մեսրոպ սրբազանի հետ գնաց Իրէական Պէղալէլ Միւղէն, հոգեւոր Տ. Եղիշէ Ս. Պատրիարքի շիրիմին մասին ճշգրտութիւնը ընկէւ համար։

● Եշ. 19 ապրիլ — Ս. Պատրիարքը շնորհակալութեան այցելութիւն տուաւ Բարձր Գոմթէրին ապարանքը։

● Ուր. 20 ապրիլ — Ըստ Հին Տաճարի, Աւետման տօնի առթիւ, Միաբանութիւնը գնաց Գեթեմանի, Հրաշտափառի թափօրով մտաւ եկեղեցի, հանդիսապետութեամբ Տ. Սմբատ Սրբազանի, որ պատարագեց Ս. Կուսին գերեզմանին վրայ, եւ քարոզեց Եղիցի ինծ ըստ բանի քաւմ բնարանով, բացատրելով թէ աստուածային կամաց հնազանդութիւնը ամենէն նուիրական բարեմասնութիւններէն է քրիստոնէին։

● Ծր. 21 ապրիլ — Վարդանի Աշխարհամատրան տօնին առթիւ, Միաբանութիւնը Հրաշտափառի թափօրով մտաւ ունեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Պատրիարք Հօր հանդիսապետութեամբ։ Ս. Գերեզմանի առջեւ ամէնքս ուխտիւ երկրպագելէ վերջ, եկանք վերնայարկի մեր մատուռը, ուր պաշտեցինք կիրակամուտը։

● Կիր. 22 ապրիլ — Աշխարհամատրան տօնի առթիւ, ըստ իրականաց Տ. Մկրտիչ սրբազան հանդիսական պատարագեց Ս. Գերեզմանին վրայ, բացատրեց եկեղեցւոյ զաղափարը, ներկայացուց քրիստոնէութեան առաջին եկեղեցին, որ էր Սիոնի վերնատունը։ Երեւց Ս. Յարութեան Տաճարի մէջ եւ այդ անունով վաղուց եղած մատուռը. խօսեցաւ տիեզերական եկեղեցիին եւ Երուս եկեղեցեաց միմեանց հետ յարաբերութեանց մասին։



● ԵՆ. 26 ապրիլ. — Ըստ յատուկ հրահանգի, Ս. Պատրիարքը այսօր, Տ. Սիմոն լրդ. և Տ. Եղիշէ արեղայի հետ ներկայ գտնուեցաւ Հրէից Թէլ Ավիվի մեծ ցուցահանդէսին, որուն բացումը կատարուեցաւ Վսեմ. Բարձր Գամբէրին նախագահութեամբ:

● Կիր. 29 ապրիլ. — Ս. պատարագը կատարուեցաւ Ս. Յարութեան մեր վերնատունին մէջ. քարոզեց Տ. Նորայր լրդ. Ոչ եկի կատարել զկամս իմ այլ զկամս այնորիկ որ առաքեացն զիս քնարանին վրայ և ցոյց տուաւ Աստուծոյ կամքին ենթարկուելու անհրաժեշտութիւնը վայելելու համար մեր երկնաւոր հօր բարեքնները թէ այս կեանքին և թէ հանդերձալին մէջ:

— Ժառ. վարժարանի տեսուչ Տ. Տիրան Վրդ. այսօր համբայ ելաւ զէպի Մարտէլլ, մասնաւոր պաշտօնով:

● Այս ամսուան ուխտաւորներ. — Այս տարի, Զատիկան տօնելու առթիւ, հակառակ տրեստեական տաղանային եւ հանապազորդական ոչ այնքան հեշտ պայմաններու, ունեցանք իւր 300 ուխտաւորներ, մեծաւ մասամբ եկած Սիււրիայէն և Եգիպտոսէն, կային նաեւ Իրաքէն, Կիպրոսէն և Կ. Պոլսէն եկողներ:

Տեսրէն Ժողովոյ կողմէ եղած կարգադրութեանց համեմատ, Առաջ թարգման Տ. Հայրիկ արեղայ եւ ուրիշ միաբան վարդապետներ, առնուցմէ խումբեր կազմելով, մագլակադրդի Կիրակիի նախընթաց հինգ եւ յաջորդ երեք օրերու ընթացքին առաջնորդեցին դասուէք Ս. Յարութիւն, Բեթղէմէմ, Գեթսեմանի, Համբարձման լեռ, Մեռեալ ծով, Յորդանան, Երիքով և Մայրափանոցս շրջափակին մէջ Ս. Թորոս եկեղեցին եւ Ս. Հրէշտակապետաց մենաստանը, ինչպէս նաեւ, արտաքոյ, Ս. Փրկչի վանքը, եւ այլ քրքրափայլեր. իւրաքանչիւր տեղւոյ վերաբերեալ սուրբ գրոցական, ազգային եւ տեղական պատմութիւններն ու աւանդութիւնները պարզելով իրենց. ինչպէս նաեւ, ի պահանջել հարկին, զոր օրինակ ի Ս. Յարութիւն, ի Բեթղէմէմ, ի Գեթսեմանի եւ ի Յորդանան, ուխտաւորաց յատուկ հոգեւոր պաշտօնաւորներ եւս կատարելով:

Որովհետեւ, ինչպէս ծանօթ է, պատերազմի ատենէն ի վեր վանքի սենեակներուն ամենամեծ մասը մինչեւ ցարդ զաղթական ազգայիններուն բնակութեան յատկացուած են, այստարի եւս շատ լայն չէին մեր միջոցները ուխտաւորաց պատասխարութեան համար: Տեսրէն Ժողովը, սակայն, այս առթիւ կարգադրութիւններ ընելու վրայ է, եւ յուսարի է որ զալ տարուայ համար ուխտաւորաց արամազրելի աւելի սենեակներ ըլլան:

## Տ Խ Ր Ո Ւ Ն Ի

### Տ. ՍՏԵՓԱՆՈՍ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Ութնամեայ պատկանելի հոգեւորականը, որ Մարտի 10ին վախճանեցաւ Սոփիայի մէջ, ներկայ հայ եկեղեցականութեան ամենէն մեծարժէք եւ հետաքրքրական զեմքերէն մին էր: Իր գերեզմանը կը փակէ վախճանեցողութեան տարիներու եկեղեցական լեցունի կեանքի եւ գործունէութեան շրջան մը: — Հոգեւոր քրիստոնեայ, Հայր հասարակաց և Հովիւ անձնորդ, ասոնք են երեք էական գիծերը իր նկարագրին՝ զոր կրցաւ բարձր պահել մինչև իր վերջին շունչը, երբ սուրբի մը պէս իջաւ գերեզման, ամբողջ իր հովուութեան ժամանակամիջոցին իր Ժողովուրդէն և ամէնքէն սիրուել և յարգուել վերջ՝ իր ամբարաս կենցաղին, անդադրում գործունէութեան և աւետարանական բազում նորոններուն համար, որոնցմով զարգարուած էր իւր կէս դար վարեց Նիկոմիդիոյ առաջնորդութիւնը, յաջորդելով Երեսէս եպս. Վարժապետանի, որ իր ձեռնաստէնին կամեցեր էր իր յաջորդութիւնը, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան զացած պահուէն Այդ ընդամեակ վիճակին մէջ չկար քաղաք մը, աւան մը, գիւղ մը, ուր չինած չլլար եկեղեցի, զպրոց, հասութարեր կալուած, աղբիւր, հասարակաց համբայ, եայլն. նոր ժամանակաց Շինողն էր անս Ոչ միայն շէնքեր կանգնեց սակայն ան, այլ նաեւ հիմնարկեց գիւղեր, անոնց մէջ պատասխարելով Սասնի և Սրբաբն մարգերէն զէպի Բիւթանիա գաղթած Լազիստանցի Հայեր, որոնց պապերը Համէնի նախարնիկներէն էին եղած: Մանիշակ, Զաքար գեղ, Ժամափայր, Արամ գեղ, Գեղամ գեղ իր դաստակերտներն էին. իր նախաձեռնութեամբ էր որ անոնց մէջ տեղացուցան և հաստատուն բնակութիւն կազմեցին այդ Հայերը, ունենալով հետզհետէ աղօթատուն, զպրատուն, որոնց շինութեան կ'երթար ինքն անձամբ հսկել: Ինքն էր որ այդ գիւղերուն տեղական նախկին անունները փոխելով հայկական ձեւ հազցուց անոնց, երբեմն տեղի տալով նաև ողբից մանրադէպերուն, որոնց ծանօթ էին իր բոլոր վիճակայինները, և որոնց մէջ ամենէն երեւելին է Արամ գեղները — Ինքնատիպ բան մը կար իր խօսքին մէջ, զոր գիտէր համեմել միշտ հեղինակը զուարթ և անձաւ արտայայտութիւններով. ու ասիկա՝ թէ՛ սովորական կամ ժողովական տեսակցութեանց եւ թէ՛ քարոզի միջոցին նոյն խոսք Արամայէկի քարոզը, Յովհ. Մկրտչի վրայ Արմաշի մէջ խօսածը և մեծ պատերազմին սկիզբը Պաղատասար թագաւորի մասին խօսածը, և աւելի կանուխ՝ Սերիսիայի քարոզը հրաշալի նմոյշներ էին ժողովրդական հոգատրութեան, որ իրմով սկսաւ և իրեն հետ վերջաւորուեց:



յաւ մեր մէջ — Աշակերտ՝ նախ Արմաշի և յետոյ Խաղաղի Ծանադարեան վարժարանին, ուր Չերազ աշակերտակից եղած էր իրեն՝ Ներսէս Վարժապետեանի տեսութեան օրով, ունէր կարեւոր ուսումն ու դարգացումը. բայց իր պաշտօնին ժողովրդական ամենակերպ գրազուսնեցուն մէջ օրն ի բուն թաղուած՝ չէր կրցած կամ գուցէ չէր իսկ ուղած մտաւոր մշակոյթի հետեւիլ. եւ ինք այնքան քիչ էր գնահատէր անոր կարեւորութիւնը, որ տեսակ մը գոհունակութեամբ նոյն իսկ կը յիշէր կարծես դայն, երբ կ'ըսէր «Գրաբաւ չեմ գիտեր, գրաբաւ չեմ կրնար խօսիլ»։ Այդ բառը կը գործածէր մասնաւորաբար գրականութեան եւ առհասարակ զարգակող ցուցասիրութեան իմաստով. ու այդպէս է, զոր օրինակ, որ կ'ըսէր. «Գրաբար հաղուած է», «Գրաբար վարժուածք ունի»։ Եւ այլն — ինքնատիպ էր նաեւ իր ներքին կենցաղին մէջ։ Ձեր սիրեր ամոռ ու գրասեղան, կը նստէր գետինը. կը գրէր ծունկին վրայ, զանգակ կամ ուրիշ միջոցներ չէր գործածէր՝ սպասաւոր կանչելու համար. տախտակամածը կը դափէր մեծ կնիքի մը վայտէ հաստ կոթովը — Բարեպաշտ եւ բարեկրօն՝ խիստ էր պահեցողութեան մէջ. անխափան ներկայ կ'ըլլար, իրկուն եւ առտու, եկեղեցական պաշտամունքին՝ զոր ինք կը սկսէր և ինք կը փակէր։ Հոգւով չափ հակառակ էր եկեղեցական նորածնութեանց. չէր սիրեր եկեղեցւոյ մէջ երգիծնի եւ նստարանի գործածութիւնը։ Իր վիճակին մէջ եկեղեցական երաժշտութիւնը նուագարանով կ'ըլլար իր ներկայ չեղած միջոցին միայն. իսկ նստարանները կը զբուռէին իր բացառիկ միջոցին և իրմէ դադտադողի նոյն իսկ, Բայց սէր ունէր ձայնագրութեան մասին։ Իր օրով և քաջալերութեամբ էր որ ներկոյից, Պարտիզակի և մանաւանդ Ատարազարի եկեղեցիները օժտուեցան կարող ձայնագրակահանքով — Կարելի էր վէպի նիւթ քաղի իր աշննաշրտութեանն։ Ձեր սիրեր թռչակ, ու յաճախ նոյն իսկ ժամուցը, Բացի ներկոյիցից, իր վիճակին բոլոր միւս վայրերուն մէջ կը կերակրուէր ժողովուրդին հիւրասիրութեամբը։ Կ'ընդունէր միայն Մուգաթայի տուրքը, զոր ժողովուրդը կը վճարէր սակայն ոչ առանց դժուարութեանց։ Ու ինչ որ կը ստանար այդ ձամբով, ամբողջովին կը զարձնէր ժողովուրդին։ Հանրաժանօթ էր իր գութը աղքատաց համար. անոնցմէ ամենէն խեղճ ու նոյն իսկ դարձ հագուածները կը նստեցնէր իր քովը և յաճախ հացակից կ'ընէր իրեն։ Երբ հեռաւոր քաղաքէ մուրաշիկ մը կը մտնէր իր մօտ. «Յարգեցէք զինքը, կ'ըսէր իր շուրջիներուն» քիչ մը անտախտիկ հեղեթութեամբ. թերեւս մեծ մտրդ մըն է, որ ծպտեալ կ'այցելէ մեզի՝ զմեզ քննելու համար»։ Կը ստիպէր որ ողորմին իրեն. ու ինքը կուտար՝ ինչ որ գտնէր իր քսակին մէջ. երբեմն տուած է իր ժամացոյցը նոյն իսկ, և ինչ արժէքաւոր բան որ կրնար ունենալ իր վրայ — Այսքան ժողովրդական այս մարդը հակառակ էր սահմանադրական կարգի. ժողովական ձեւակաւ նութեանց զանդաղութիւնը կը հառցնէր իր հոգին. կ'ուզէր գործել փորձ ու պարկեւտ քանի մը

անձերու խորհրդակցութեամբ միայն, իր խղճին և Աստուծոյ միայն մնալով պատասխանատու։ Այս և ուրիշ քանի մը գիծերու մէջ կը յիշեցնէր Խրիսեանը, առանց թէեւ քնաւ հասնելու անոր, որուն շունէր անշուշտ ոչ մտքին թուիչը և ոչ խօսքին ու գրչին թափիչ շնորհները։ Բայց կը պաշտէր դայն։ Անոր կաթողիկոսական բնորութեան միջոցին, երբ գացեր էր էջմիածին, այնքան գրաւիչ եղեր էին իր խօսքն ու ընթացքը ի նպատակ շարիկին և ընդգէմ Աշրքեանի, որ Գրիգոր Արքեպիսկոպոս գրաւուած էր իր անձէն. ու «Մշակ»ի մէջ իր մասին գրուած համակրանքէն ազգուած՝ Թիֆլիսի երկրասարգութիւնը օր մը լծուէր էր իր կառքին — Թէեւ խորագէտ հարկեմաւոր, վտանգի աւանդէն մօթ օրերուն, երբ սարսափը իր արիւնքն ու լախար ամէն տեղ կախած էր Հայրութեան գլխուն վրայ, առանց զգացումներ վերաւորելու, կրցաւ ճիւղն վարուեցողութեան մը կերարկութեամբ համարձակօրէն խօսիլ ամէն կողմ և նոյն իսկ կառավարական շրջանակներուն մէջ, իր հօտին օգտին համար միայն։ Անգամ մը սակայն գառնուէր առիւծ դարձաւ իր մէջ, երբ, 1895-ի ջարդերուն, Կէյլիէի Ազգիստի մէջ ԱՇ-ի չափ հայեր կոտորէր, և մնաւ ու կիսամեռ լեցուցեր էին ջրհորի մէջ։ Սրբազանը հոն փութացեր էր խելացի ու լալագին. ու ջրհորին բերնին առջեւ, ուր հասեր էին նաեւ ներկոյիցից Գաւառապետ Կառավարիչը, Ձին, Հրամանատարը և Տօթի. Ձեմալբեք՝ յանուն անգղ. դեսպանատան, բռնելով կառավարիչին օձիքէն, «Իսպառ զու, զաւակներս կ'ուզեն քննէ, որովհետեւ երբ քանիցս մասնաւոր ըրի քեզի այս վտանգը, չլսեցիր զուս ինձի», մոնչացեր էր ամբողջ հոգւովն ու մարմնովը թունդ եղած։ Այս ժէպտը սուղի նստաւ յետոյ իրեն. Կ. Պոլիս կանչուէր էր ատոր համար, և հոն էր Պանքաթի մեծ եղբորն, հազիւ ազատելով վերահաս սպանելից մը, տանիքէ տանիք անցնելով և իտալացիի մը ձեղնայարկը ապաստանելով — Բայց իր հովուական հոգին եւ բարձր ազգասիրութիւնը երեւան եկան ամենէն աւելի տարագրութեան շրջանին, երբ, իր ժողովուրդին հետ խառնուած, տառապանքէ տառապանք անցաւ անապատները, անգամ մը ժանտատենդէ և ուրիշ անգամ բժարք ժանտատենդէ հիւանդանալով, որոնցմէ ազատած էր հրաշխիւ Գետոյ Ձին. իշխանութիւնը զինքը զրկեր էր Երուսաղէմ, ուր, թեկնելէ մտանձնացած, մնաց մինչեւ պատերազմի աւարտէն քանի մը ամիս առաջ, երբ փոխադրուեցաւ Բօրզ Սայիտ։ Ասկէց, Ձինագաւրին, վերադարձաւ ներկոյիցի, հին ուժերը ժողոված՝ ամբողջ, ամբողջ կործանած իր գործը վերականգնելու հաւատքով և իղձով լեցուն։ Քէմալական շարժումին անկարելի եղաւ սակայն իրեն մնալ Բիւթանիա, ու, վերստին անցած ի զուլիս իր հօտին, անցաւ Թրակիա և յետոյ անկէ Պուլկարիա, առանց զիտնալու թէ վերջին հանգրուանը պիտի ըլլար ան. այնքան խոր էր իր ստաքինի հոգւոյն մէջ երկար ապրելու և որդիական իր հաւատքը վիշափ և թափառական կեանքի այս շրջանը իր գոյութեան ամենէն ա-



դիտարկել բայց նոյն ատեն ամենէն ժառանգոր ժամանակամիջոցը եղաւ, աւելի քան երբեք իր մէջ յայտնարեւելով համարեութեան, սիրոյ, ազգութի եւ արիւթիկեան այն տիպարը, որ մեր եկեղեցականութեան ամենէն պատուարեր քանի մը մեծագոյն ղեմերու խումբին մէջ պիտի յիշուի միշտ պատուով — իր մասին քիչ մը ընդհանրացած էր այն կարծիքը թէ բաւական կրթութեամբ էր իր առաջնորդական գործունէութեան մէջ. ուղիղ էր անշուշտ այդ կարծիքը, երբ նկատի առնուի մանաւանդ սա պարագան թէ իր կատարած շինութիւններուն ամենամեծ մասը զորոյցներու համար հասութիւններ կալուածներ էին: Ստոյգ է թէ վաւարեցեալ ըսելով առհասարակ կը հասկնար տեսական այսինքն ոչ գործնական մտքի տէր մարդիկ. ստոյգ է նոյնպէս զարմեալ, որ յաճախ կ'ըսէր թէ կրթութեան եւ ուսման այսպէս լայնորէն ծաւալումը ժողովուրդին կեանքին մէջ՝ արդեօք տեսակէտով մը ֆաստական պիտի չըլլար մեր իրականութեան մէջ, զեղծուեալ ժողովուրդին զաւակներուն սէրը չեղեցնելով հոգէն եւ արհեստներէն, եւ աւելի մտաւորական կեանքի տենչը վառելով անոնց սրտին մէջ. ու ասիկա՝ յաճախ ընդունայն կերպով: Բայց այսպէս խորհող մարդը արդար չէ անպատշաճ ուսումնասիրեց նկատել: Վաւարեցեալ բառին վերաբերմամբ ըսածը սրամտութիւն մըն էր սա առաւելն, ըստ բախտի ուսուցչական ասպարէզ նետուած խեղճներուն տպաւորութեան տակ մտածուած թերեւ. իսկ միւս նկատողութիւնը՝ իր ժողովուրդին ապագայովը մտահոգ չօր մը խորհրդածութիւնն է սոսկ, որմէ մանկավարժութիւնն իսկ կրնայ հաւանաբար շատ քան ունենալ հասկնալիք, մանաւանդ մեր դրութեան մէջ, ուր կրթութիւնը կեանքին համաձայնեցնելու գործը զեռ ունի թեւի կողմեր: Իրենին նման բարի եւ աշխիւ հոգի մը անկախելի էր որ կարենար չսիրել զարցոյն ու կրթութիւնը — Զինքը յատկանշող ամենէն ուշագրաւ կողմերէն մին ալ կամքի ոյժն էր. իր հակառակողները, որոնցմէ ունեցած էր երբեմն բաւական թուով, ինչպէս ամէն գործին մարդ, յամառութիւն կը կոչէին զայն յանիրաւի, անոնք սակայն որ մօտէն ճանչցած են զինքը, գիտեն թէ իր համոզումներուն արիւթիկները ունեցող գործիչի ընթացք էր միայն անոր այդ հոգեկան զօրութիւնը, զոր միշտ տարզեց իր գործունէութեան միջոցին իր առջեւ ցցուած արգելքներուն ղեմ: Իր հակառակողները, որոնք իր վիճակին բոլոր զլխաւոր վայրերուն մէջ, Նիկոմիդիա, Ատարազար, Պարտիզակ, Կէլիէ, Բաղարու. նոր գիւղ, ինքզինքներուն մտաւորականի դիրքը տուած, զիրք էին կազմած ժամանակ մը իրեն ղեմ, տեղի տուին վերջապէս հաստատի եւ համոզումի մարդուն առջեւ, որ այլ եւս՝ մինչեւ վերջը իր բարոյական ազդեցութեանը տակ պահեց ամբողջ իր հօտը: Պուլիարի մէջ, ուր Տեղապահի եւ Առաջնորդի հարցեր ի սկզբան պահ մը ազմկեցին զինքը, բարեբախտաբար Մայր-Աթոռայ անօրինութիւնը կտրուկ եղաւ, եւ այնքա՛ն ու բազմազգիւն ծերունին մնաց

իր արժանիքին բարձրութեան վրայ: Վերջերս, իր մահուան առթիւ, զարմեալ յուզուեցան շշուէներ, անոնց արուելով զանազան մեկնաբանութիւններ. Զեռք դիտել թէ ո՛րքան է իրականութիւնը՝ այդ լուսածներուն մէջ, եւ ո՛րքան մանաւանդ թափնը՝ հոսանքներու ընդդիմամարտութեան ոգիին, որով լեցուած է զժառանգաբար միջնորդորդ ամենութեւ, եւ որուն ապրան (= քաղաք) հանել պէտք է նախ, ստուգելու համար բուն կշիռը — Տ. Ստեփանոս արքեպիսկոպոս ծնած էր Նիկոմիդիոյ մէջ, 1816-ին: Աւագանի անունն էր Մելգոն: Շահնազարեան մտած ատեն վերածայնուած էր Սուրեն: Ներսէս Եպս. Վարժապետեանէ կը ձեռնադրուի 1871-ին Սարիաւազ. 1873-ին՝ Վարդապետ, կոչուելով Ստեփանոս: Նոյն տարին կը կարգուի Փոխանորդ Առաջնորդ Ներսէս Սրբազանի, որ այդ միջոցին իբր Տեղապահ Պատրիարքութեան՝ Կ. Պոլսի փոխարեւած եւ յաջորդ տարին եւս Պատրիարք ընտրուած լինելով, նորրինձայ Ստեփանոս Վարդապետ Առաջն. Փոխանորդի տիպաւոր կը վարէ վիճակը, որուն Առաջնորդ կ'ընտրուի 1880-ին: 1886-ին Եպիսկոպոս կը ձեռնադրուի Մակար Կաթողիկոսէ, իրեն օժակից ունենալով ի մէջ այլոց Օրմանեան եւ Սրուանմտեան Եպիսկոպոսները: Բազմաթիւ քահանաներէն զատ, զորս ձեռնադրած է իր եւ շրջակայ վիճակներուն հոգեւոր պէտքերուն համար, ունեցած է նաեւ երեք ձեռնասուն Վարդապետներ, երեքն ալ Պարտիզակցի. Յովհաննէս Վարդապետ, ընտրի հոգեւորական մը, որ վաղամեռիկ եղաւ զժառանգաբար. Մկրտիչ Վարդապետ Սղաւունի, եւ Կարապետ Վարդապետ Մաղլումեան, երկուքն ալ 24 տարիներէ ի վեր այժմ Եպիսկոպոս արդէն — Նիկոմիդիոյ առաջնորդներու զաւազանացանկին վրայ ամենէն պատմական եւ ժայլուն անուաններէն մին պիտի մնայ հոգելոյս Յովակիմեան Սրբազանի անունը, իր միւս անուանակիցներուն Աղաւնի Ստեփանոսի եւ Մաղաբեան Ստեփանոսի հետ միասին միշտ անմոռաց եւ սիրելի ընծայելով Ասեփանոսեանց շնորհապատկ յիշատակը՝ ոչ միայն Բիւթանահայոց այլ նաեւ ամբողջ ազգին եկեղեցական տարեգրութեանց մէջ:

Թաղապետութիւն իր հոգեւոր:

## ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆԵԱՆ

Հայ արուեստի գիտութեան համար ընդհանրապէս եւ Հայ եկեղեցւոյ ճարտարապետական հրնագիտութեան համար մասնաւորապէս՝ անփոխարինելի կորուստ մըն է Թորոս Թորամանեանի մահը, որ Մարտ 1ին տեղի ունեցած է Երեւանի մէջ: Բնիկ Շապին Գարահիւսարցի, շրջանաւարտ Կ. Պոլսոյ Գեղարուեստական վարժարանին, եւրոպայի մէջ եւս հրահանգական պտոյտ մը հատա-



ընդէ կտք՝ ի վերջոյ հաստատուած էր կովկաս և Հայաստան, իր գիտնականի տաղանդն ու հայրենասէրի սիրտը նուիրելով Հայ ճարտարապետութեան մասնագիտութեանը Մանրագիտին ուսումնասիրութեան առարկայ ըրած էր այդ տեսակետով արժէք ներկայացնող բոլոր կիսական-գուն կամ աւերեալ բոլոր հին շէնքերը, որոնք կային արեւելեան Հայաստանի մէջ, մասնաւորապէս հին եկեղեցիները, պալատի փլատակները, կամուրջները, և ուրիշ շինուածական մնացորդները, մասնաւորապէս Տեկորի և Մերկի տաճարները, ամբողջ Անիինները, որոնց առաջին երկուքին վրայ զրեց ուսումնասիրութիւնները, և երկրորդինները առարկայ մնացին միշտ իր հետազոտութիւններունը Նիկողայոս Մառ, Սղըքի-կովսկի և ուրիշ եւրոպացի գիտուններ մեծապէս գնահատած են զինքը։ Մառ իրեն հետ ունեցած է զինքը, երբ Բագրատունեաց ոստանին պեղումները կ'ընէր ի հաշիւ Բեղարուրի կայսերական թանգարանին։ Սղըքիկովսկի չնորձ գովեստներով կը յիշատակէր զայն՝ Հայ ճարտարապետութեան նուիրած իր գերմաներէն երկնաոր ուսումնասիրութեան մէջ։ Նոյնպէս Տիւն և ուրիշներ յարգանքով յիշած են միշտ զինքը։ Ինկած աղբի մը փշուած անցեալին գեղեցիկութիւնները հասկնալու համար, միտքով և սիրտով միանումայն պէտք է կատարել անոնց քնննութեան գործը։ Այո՛, սիրտով ևս, որովհետեւ եթէ չես սիրեր աղբը՝ որուն հինաւորաց մեծութիւններունը բեկորներուն մէջ ես կանգնած, պիտի չկարենաս անոր անցեալը լուսաւորել իր ներկայովը։ Թարմանեանի ուսումնասիրող տաղանդը իր քննադատութեանց մէջ կըցաւ հաւասարակշռել զատուումն ու զգացումը, չափաւորեցութեան չգնաց բնառ ոչ մէկ և ոչ միւս կողմով։ Եւ կըցաւ նոյնիսկ օտար գիտնականներու ընծայել բարի և լուսարանող աշակցութիւն մը այդ տեսակետով։ 1908ին ճանչցանք զինքը Այեք-օսանտարաբով մէջ, ու ծանրաբարձ գիտունի իր լրջութիւնը գրաւեց զմեզ։ Երկու տարի վերջը, 1910ին, կրկին հանդիպեցանք իրեն Անիի մէջ, թաղուած՝ պեղումներու և հետազոտութեան խումն զբաղումներուն մէջ։ Գերեկն իրուն կ'աշխատէր մշակի մը պէս, բրիչն ի ձեռին, ու զիշերը զրի կ'առնէր իր նօթերը, երբ Ախուրեանը կը լեցնէր խաւարը իր լալագին մոնչիւնին ստեղծմովը։ Իր տեսութեամբ, Հայ ճարտարապետութեանը, թէ և կրօնական շինութեանց մէջ էր որ կը յայտնուէր առաւելապէս, որովհետեւ եկեղեցիները կը կառուցուէին աւելի յաճախ և կային միշտ, աղբին իր քաղաքական կեանքը կորսնցնելէն ետքն ալ, բայց անտարակոյս պէտք էր եղած ըլլար քաղաքական և հասարակական շէնքերու

ոճ մըն ալ։ Խօսեցաւ մեզի այս մտքը, անձամբ տանելով զմեզ միջնաբերդի բարձունքին վրայ կառուցուած արքայական կիսափուլ պալատի վերին դասիկոնը, ուսկից աչքը կ'առնէր ամբողջ Շիրակի սահմանները։ Կ'ըսէր թէ մեր հնագոյն տաճարները, Պեկոր, Մերկ, Նոյն իսկ Էջմիածինները, իրենց նախնական ձեւին մէջ, երբ դեռ պաղկիկէն վրայ չէր յարադրուած գմբէթը կամ կաթողիկէն, հին հայ հեթանոսական մեհեհանները կը յիշեցնէին։ Վառնդի, երբ առաջին անգամ աղբը պաշտօնապէս դարձաւ քրիստոնէութեան, հին մեհեհաններն էին որ փոփոխութեանց ենթարկուելով և սրբազործուելով, վերածուեցան տաճարներու։ Կաթողիկէն իր վերջնական ձեւին յանգեցաւ ոչ յառաջ քան Է. դարու վերջերը։ Յոյց տուաւ մեզի այն շէնքը, որ հաւանաբար Հայրապետանոց էր եղած ի սկզբան և ապա մզկիթ՝ Բագրատունեաց անկումէն յետոյ, և զոր Մառ յետոյ վերածներ էր թանգարանի։ Բիւզանդական ևս Հայ ճարտարապետութեանց փոխադարձ ազդեցութեանց, հայկականին՝ գոթականին վրայ ազդեցութեան և հայկականին ինքնաշատկութեանց մասին չկած էր արդէն այդ միջոցին կազմել իր տեսութիւնները, որոնք սակայն այդ առին դեռ իր ըմբռնումին մէջ չէին յանգած։ Վերջնական կերպի մը — Հայաստանի առաջին հնրարապետութեան և մասնաւորապէս երկրորդին առին, անշուշտ աւելի պիտի լայնանար իր ուսումնասիրութեանց գետինը, և աւելի պիտի գնահատուէր իր արժէքը։ Արդարեւ, 1920ին, Խ. Հայաստանի կառավարութիւնը անոր յատկացուց թոշակ, և հրաւիրեց զայն հնագիտական ուսումնասիրական աշխատանքի, ապա նըշանակուեցաւ գործօն աշխատակից։ Հնութիւններու Պահպանման Գնահատման Եւ Պահպանման Կոմիտէի պետական թանգարանի ճարտարապետական բաժնին և Հայաստանի Կուլտուրայի պատմութեան ինստիտուտի գիտական աշխատակից և անգամ նախագահական մարմին։ 1917ին, «Եկեղաբուսութիւն» մէջ հրատարակած էր արդէն ուսումնասիրութեան մը «Հայաստանի արքունական իշխանական ապարանքներն ու անոնց ներքին կենցաղը» վերնագրին ներքեւ։ Իսկ այս վերջին շրջանին, դասաւորելով և ամփոփելով իր երկարամեայ գործունէութեան արդիւնքները, գրած է «Զուարթնոց» մենագրութիւնը, «Հայ ճարտարապետութեան պատմութեանը» համառոտ ակնարկը։ «Շինարարութեան և շինարարութեանը Հայ ճարտարապետութեան մէջ» երկը, և «Ներկիւն Հայ ճարտարապետութեան պատմութեան» ընդարձակ գործին առաջին հատորը — «Սիւն» քրտագգած վիշտով և օրհնութեամբ կ'արձանագրէ մեծանուն գիտունին և պատուական Հայուն մահը։